



ԼԼՄԱԳԻՐ
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ԷՄԻՆ. ԱՐԽԻԵՍԿՈՒՊՈՍ ԷՄԻՆ ՊԱՏՐԱՐԿՈՒԹՅԱՆ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1954

ԽԵ.
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Երուսաղեմի Արքուք երեկ եւ այսօր (Բ).	1
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Ծնունդ Յիսուսի.	ՀԱՅԿԱԶՈՒՆ Ա. ՔԷ. ՈՍԿԵՐԻԶԵԱՆ 6
ԳՐԱԿԱՆ	
— Մկրտիչ Պետրկաբաշեան (2).	Յ. ՕՇԱԿԱՆ 9
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— Դպրանոցն անձրեւից.	ԶԱՒԷՆ Ա. Զ. 12
— Մաղթանի.	ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ 13
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Պատմութիւն Խորենացիի Քննադատութեան (2).	ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ 14
— Դիլլամեթի դիւցազներգութիւնը (3).	ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱՔՂ. ԶՂԶԱՆԵԱՆ 17
ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ	
— «Մեր նախնեաց հաւատք» նկատողութիւններ.	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 20
ԸՆԿԵՐԱՅԻՆ	
— Մեր ըլլալու արուեստը (2).	Ա. Մ. 23
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիրներ.	27
— Եկեղեցական - Բեմական.	27
— Պատեմական.	31
— Ս. Ծննդեան ուխտաւորութիւն Իսրայէլէն.	32
ՏԻՐՈՒՆԻ	
— Մարիամ Մայրապետ Խաչերեան.	32
Հաւուելեցիո. նպատից.	33
Զեկոյց Հ. Բ. Բ. Միութեան.	36

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻՐ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

2013

1954

≡ ՅՈՒՆՈՒԱՐ ≡

ԹԻՒ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՔՈՌԸ

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ



Կրթական. — Երուսաղէմի Միաբանութեան աւագ պարտականութիւնը անտարակոյս, Ս. Տեղեաց պահպանութիւնն է եղած դարերէ ի վեր, ու ի պատիւ Աթոռը պահպանող հոգևոր այդ փաղանգին՝ պէտք է ըսել թէ անոնք այդ զործը կատարած են հրաշալիին մօտեցող անձնութեամբ մը: Հայ ժողովուրդին համար հնար չէ ուրանալ այս պարագան, ինչպէս հնար չէ անտարբերութեամբ վերաբերուիլ եղբրական անցեալի մը նաւաբեկութիւններէն հրաշքներով ազատած եկեղեցական ու ազգային այս Հաստատութեան հանդէպ, որ Երուսաղէմի զինուորեալ Միաբանութեան կողմէն այնքան զուրկութեանքներով պահուեցաւ և կը շարունակէ պահուիլ:

Մեր նախորդ Խմբագրականով, ընդհանուր տեսութեան մը մէջ, եզրակացուցինք անհրաժեշտը, ու պէտք չենք տեսներ մի առ մի թուելու ողորումի և զոհողութեանց այն բազմաթիւ սխրագործութիւնները, որոնք Երուսաղէմի Աթոռին Միաբանութեանը եղան և կը շարունակեն ըլլալ: Մեզ կանխող սերունդներու և մեր զործը արդէն փաստերու չեն կարօտի, զերագոյն փաստը անոր այժմու գոյութիւնն է ինքնին, հրաշքի մը համահաւասար: Այդ հրաշքը դարերէ ի վեր կատարուեր է արդէն այս նուիրական յարկին մէջ: Հրաշք մը չէ՞ միթէ զարմանալի այն իրողութիւնը, որով իր ճակատադրին դէմ ամէն օր մաքառեր է նուիրեալներու խումբը այս Հաստատութեան, ի հեճուկա բոլոր դժուարութեանց, պահել ջանալով սակայն հոս, Վշտին սրբութիւնը և Յօյսին գորութիւնը խորհրդանշող այս երկրին մէջ, իր դերն ու գիրքը հաւատարմութեամբ՝ աշխարհի ամենէն հզօր ու յառաջագէմ ազգերու և եկեղեցիներու կարգին:

Ի մտի պէտք է ունենալ թէ Հայ ժողովուրդը յանձին երուսաղէմի զինուորեալ Միաբանութեան, դարերէ ի վեր հաւասար զիրք և իրաւունք կրցեր է ունենալ, չորս հարիւր միլիոն Լատին եկեղեցիին և երկու հարիւր միլիոն Օրթոտոքսներու կարգին, ու կը շարունակէ իր այդ զիրքը, նոյն կորովով և նախանձախնդրութեամբ, հակառակ ժամանակներու չարիքին և բազմազիւմի դժուարութիւններու։ Ս. Քաղաքը եկող ամէն Հայ ուխտաւոր կամ այցելու ինքզինքը մեծապէս միմիջարուած և հպարտ կը զգայ, և այս շնորհիւ ուշադրաւ այն զիրքին՝ զոր իր ազգն ու անոր հոգևոր իշխանութիւնը, — ամենուրեք այնքան նուազած ու վերջոտնուած ամէն տեսակէտով — կը պահեն տակաւին հոս։ Ու անոնք բոլորը լայնցած շունչով կը վերադառնան իրենց տեղերը, համոզուած՝ թէ դարերէ ի վեր հոս հսկող հոգևոր զինուորութեան մը ջանքերով է որ մշտապէս կանգուն մնացած է քրիստոնէական կրօնքի և ազգային կեանքի այս Տունը, զոր նախնիք թողուցած են մեզի իբրև սուրբ ժառանգութիւն։

Ս. Տեղեաց պահապանի պարտաւորութիւններով միայն չէ բաւականացած սակայն երուսաղէմի Միաբանութիւնը, թէև այդ գործը ինքնին պիտի բաւէր որ ան լիովին կատարած ըլլար իր պարտականութիւնը. անիկա դարերու ընթացքին, պայմաններու ներած չափով, կատարած է նոյնպէս կրթական ու մշակութային գործ մը, ազգին հոգևոր ու մտաւորական կեանքին բերելով իր նպաստը։

Երուսաղէմ միշտ ունեցած է իր հոգևոր սաղրանոցը, իր ժառանգաւորացը, որ Հաստատութեան տուած է գէթ կէսը իր Միաբանութեան անդամներուն, միւս կէսն ալ ինքնին զոյանալով յետոյ դուրսէն եկած ինքնուս անձերու կամ եպիսկոպոսներու մօտ փոքրաւորութեամբ հասածներու միջոցաւ։ Երկու կերպերով ալ հասած վանականները ունեցած են իրենց օգուտն ու արգասիքը թէ՛ վանքին մէջ և թէ շատ յաճախ վանքէն դուրս ժողովրդական ծառայութեանց մէջ։ Յիշատակութեան արժանի է մասնաւորապէս վերջին հարիւրամեակի ընթացքին, Եսայի Պատրիարքի օրով, Մելքիսեդեկեան շրջանը, որ ունեցած է կրթական շատ զոհացուցիչ վիճակ մը։ Այդ վիճակը աւելի կամ նուազ արդիւնաւորութեամբ շարունակուած է նաև յետոյ, Յարութիւն պատրիարք Վեհապետեանի օրով, որ սակայն առաջին Համաշխարհային Պատերազմին և մեր ազգային ալէտին հետևանքով պիտի դադրէր ժամանակուան մը համար։

Դուրեան կրթանուէր պատրիարքի զահակալութենէն անմիջապէս վերջ, ձեռնարկներ եղան դպրոցական և կրթական գործի վերակենցաղման։ Դուրեան Սրբազանը երուսաղէմի պատրիարքութիւնը ստանձնած էր առաւելապէս կատարելու համար «Սուրբ վրէժխնդրութեան մը գործը», ինչպէս ինք սովոր էր ըսել։ Այդ նուիրական վրիժաւորութիւնը ուրիշ բան չէր բաց եթէ լեցնել տեղը Սրմաշի իր մտքի գաւակներուն, որոնք իբրև մեր օրերու Դեռնդեանք, ինկան իրենց հաւատքի ճամբուն վրայ։ Ըստ իրեն, Հայ երուսաղէմը լաւագոյնս ծառայած կ'ըլլար ազգին և եկեղեցիին, եթէ կարենար կրթական բեղուն կեանք մը և իմացական մակարդակ մը ստեղծել։ Յիրաւի Սիոնի բարձունքին վրայ, ուր Աստուծոյ տապանակը հանգչէր էր դարերով, միակ կայանն էր ուր կարելի պիտի ըլլար վերականգնել կրթական ու մշակութային այդ գործը։ Յետոյ պէտք է նշել թէ անհամեմատօրէն զերազանց էին հոս յարմարութիւնները և պայման-

166-98



19365

ները, բան Արմաշի և կամ սփիւռքի որևէ կեդրոնի մէջ: Որովհետև Ս. Յակոբեանց Հաստատութիւնը նախ իբրեւ՝ կայք և տեղ, միջազգային կրօնական ուստանի մը մէջ, յետոյ սաստուածաշնչական և եկեղեցական ուսմանց մշակման տեսակէտով, Սիոնի բարձունքին վրայ դարերով անասան նստած այդ Հաստատութեան մէջ կայ ու կը մնայ պատկառելի ճոխութիւն մը ձեռագիր և տպագիր ազգային և օտար զիրքերու, տակաւին հոգևոր կեանքի միսթիք նուիրականութիւնը, զոր կուտայ ամէն հայու սրտին ոչ միայն Տնօրինական Ս. Տեղեաց խորհուրդը, այլ նաև վանքին բազմադարեան և ազգային սրբութեանց զգացումը: այս բոլորը կը ստեղծէին հոգեպարար մթնոլորտ մը և դաշտ մը եկեղեցական դաստիարակութեան գործին համար:

Եւստով Պաղեստինի զանազան անկիւններէն, Լիբանանէն և Սիւրիայէն հաւաքուեցան աշակերտներ և կազմուեցան դասարանները ժառանգաւորաց վարժարանին: Յաջորդ տարիներուն կազմուեցան ուրիշ երկու դասարաններ ևս, որոնց մէկուն ամբողջ շրջանի ծախքը ստանձնեց Պատրիկ Կիւլպէնկեան, ամերիկացի ապստոլական ազգասէրը, ազգային ու եկեղեցական աւանդութեանց և սրբութեանց զգացումով խնկուած հին ընտանիքի մը այդ օրերու նահապետներէն մին: Երկրորդ նպաստը աւելի մեծ չափի մը վրայ եղաւ մեծանուն ազգասէր ու բարերար, Կարապետ Մելգոնեանի կողմէն, տարեկան հազար ոսկիի մնայուն նուիրատուութիւն մը, Երուսաղէմի եկեղեցական կրթութեան գործին:

Նիւթական այս կրկնակ ապահովութիւններէն յետոյ կրթական այս գործին սիրայօժար պիտի տրամադրէր ինքզինքը Բարդէն Եպս. Կիւլէսէրեան, իբրև թանկագին աշակից մը իր վարդապետին՝ Դուրեան պատրիարքի: Այս առթիւ, Բարդէն Սրբազանի ջանքերով, ամերիկահայ ազգայիններու կողմէն կատարուած դիմումին իբրև արդիւնք, Ամերիկեան Եպիսկոպոսական Եկեղեցին ժառ. վարժարանի մէջ անդերէն լեզուի, գրականութեան և ուրիշ դասերու իբրև ուսուցիչ կը զրկէր զիսուն և պարկեշտ քահանայ մը, Տէր Պրիմէն:

Դուրեանի առաջին տարիէն կազմուած անդրանիկ դասարանի աշակերտներէն երեքը 1928ին կ'ընդունէին արդէն քահանայական ձեռնադրութիւն, իսկ անոնցմէ երկուքը՝ այժմու Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան և Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան կը մեկնէին Անգլիա կատարելագործելու համար իրենց ընդհանուր զարգացումը:

Այս առաջին նախախայրիքին յաջորդող միւս երկու զլխաւոր դասարանները, որոնց առաջինը Կիւլպէնկեան և երկրորդը Մելգոնեան կոչուեցան, քանի մը տարիներ յետոյ, առաջինը Դուրեան Սրբազանի մահէն անմիջապէս վերջ և երկրորդը Թորգոմ Սրբազանի պատրիարքութենէն տարի մը յետոյ Ս. Աթոռոյ և ազգին պիտի տային տասներկու վեղարուորներ: Գեր. Տ. Սիոն Եպիսկոպոս, Հայկազուն, Պարզև, Զոհն, Սերովբէ և Շաւարշ վարդապետներ, ինչպէս նաև Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. և Հայրիկ, Տիրայր և Ասողիկ վարդապետներ, որոնք զիրենք կանխող Տիրան և Նորայր Սրբազաններու հետ, Դուրեան Սրբազանի օրով պատրաստուած եկեղեցականներու փաղանգը կը կազմեն:

Թորգոմ պատրիարքի շրջանը աւելի ամբողջական ու պայծառ շարունակութիւնը պիտի ըլլար իր նախորդին: Իր առաջին մտահոգութիւններէն մին

պիտի ըլլար ժառանգաւորացի և Լ'նժայարանի ուսումնական ծրագրին վերակազմութիւնը: Վանդի, Գուրեան պատրիարքի մահով, և Բարզէն Սրբազանի Անթիլիասի իբրև կաթողիկոս մեկնումով, ժառանգաւորաց վարժարանը կը կորսնցնէր բազմահմուտ և հմայիչ դասախօս մը և պատրաստուած ուսուցիչ մը: Նորահաս սերունդին մէջ չէին պակսեր ուժեր, սակայն պէտք կար վարիչ ձեռքերու: Այդ ծրագրին բարւոք իրադրոժումը ապահովելու համար երուսաղէմ հրաւիրուեցան իբրև ուսուցիչ, պր. Շ. Պէրպէրեանի և պր. Յ. Օշականի նման փորձ և մասնագէտ դաստիարակներ: Դպրոցի Տեսչութիւնը յանձնուեցաւ Գեր. Տ. Տիրան Սրբազանին, այն տառն վարդապետ: Վանքի երիտասարդ ուժերը լծուեցան գործի, ընթացք առին զրական և բանախօսական երեկոյթներ, դպրոցի մտաւորական մթնոլորտը ոգևորող: Ինք ևս կրթական այս գործունէութենէն խանդավառ՝ պիտի ստանձնէր Լ'նժայարանի եկեղեցագիտական ուսմանց դասախօսութիւնները՝ նման իր նախորդին:

Սերունդը որ պիտի շարունակէր հասակ նետել Թորգոմ պատրիարքի շրջանին, վանական մթնոլորտին մէջ, պիտի կրկնէր հարազատ պատկերը, առաւել կամ նուազ չափով, զինքը կանխող սերունդին: Պսակ, Միւսոն, Շնորհք, Հմայեակ, Հայկասեր, Կորիւն, Բարզէն, Յակոբ, Թորգոմ, Յարութիւն, Իսահակ վարդապետները շնորհալի արգասիքներն են այդ օրհնուած օրերուն:

Մեսրոպ և Կիւրեղ պատրիարքներու շրջանին տակաւ պիտի նուազէին կրթական այս փայլքն ու խանդավառութիւնը, հակառակ զգացուած բարի կամեցողութիւններու: Համաշխարհային Բ. Պատերազմը, Պաղեստինի աղէտը, տակաւին ներքին անհասկացողութիւններ, մահեր և հեռացումներ կրթական մշակներէն կարեւորներու, շատ բան պիտի զեղչէին Հայ երուսաղէմի կրթական ու մշակութային թափէն: Այդ դժուար օրերուն Միաբանութեան միակ մտահոգութիւնը պիտի ըլլար եղածը պահել, անոր նկատմամբ սէր և զուրգուրանք տածել, սպասելով լաւագոյն օրերու վերադարձին:

Կրթական այս վերելքին գոյգ թեւերը եղան վանքին տպարանը և Սիւն ամսաթերթը: Քսանհինգ տարիներու ընթացքին, նկատի առած միայն վերջին շրջանը, երուսաղէմի տպարանէն հրատարակուած են տւելի քան հարիւր հատորներ, պատմական, բանասիրական, եկեղեցական, զրական և ուրիշ նիւթերու շուրջ: Իրաւամբ ըսուած է թէ «Տպագրութիւնը հրետանին է մարդկային մտածումին», և Ս. Յակոբեանց տպարանի կոչումն է եղած ազգային մշակութիւն և կրօնական իտէալին հետապնդումը:

Հակառակ անտեսական դժուարութիւններուն, որոնք միշտ անպակաս եղած են Պաղեստինի մէջ, հակառակ երուսաղէմի թեմական փոքր շրջանակին, և Միաբանութեան Ս. Տեղեաց պահապանի զլխաւոր հանգամանքին, վանքի տպարանը կրցեր է արժեցնել թէ՛ անցեալի մէջ և թէ՛ մեր օրերուն մանաւանդ ոչ միայն իր գոյութիւնը, այլ նաև անցեալի մէջ իր կարելին՝ և վերջին շրջանին իր ցանկալին: Այսօր դարձեալ, հակառակ մեր շուրջը ստեղծուած աննպաստ պայմաններուն, Ս. Յակոբեանց տպարանը համեմատաբար ամենէն լայն չափով կը ծառայէ մեր մատենագրութեան և մշակոյթին. փափաք, որակն ու տեսակը իր հրատարակած տարեկան զրքերու:

Գալով Սիւն ամսագրին, որ լրացուցիչ մասը կարելի է նկատել կրթա-

կան այս իրադրժույթներուն, քսանեօթը տարիներէ ի վեր Սիւնը ջանացած է հաւատարիմ ըլլալ ինքզինքին, և այսօր երբ կը նայինք իրմով կարելի եղած արդիւնքին, զոհունակութեան զգացում և երախտագիտութիւն ունինք հանդէսը բոլոր անոնց, որոնք նիւթեցին մտքի այս դորժը, որ Հայաստանեայց եկեղեցւոյ սղին և ուղղութիւնը բացատրող ու տարածող, Աւետարանէն բղխող խաղաղիկ և փրկարար ներշնչումներ բաշխող և մեր եկեղեցագիտական և բանասիրական հարցերուն կարևոր լուսարանութիւններ բերող զործունէութեամբ, իր որոշ արժէքն ու տեղը ունեցան և ունին Հայ մամուլին մէջ:

Հոս անհրաժեշտ է նշել թէ երիտասարդ սերունդը, որ ուղղակի կը բխէր երկու մեծ պատրիարքներու շրջանէն ու ողիէն, աւելի կամ նուազ չափով իրադրժեց ինքզինքը, և բերաւ հմտութիւն, տաղանդ և կարողութիւն, ոմանք տիրական, ուրիշներ խուզարկու և եռանդաւոր իրենց իմացականութիւնը ձեռնահասօրէն փորձելով բազմատեսակ նիւթերու վրայ, եկեղեցական հմտութենէն մինչև բանաստեղծական նորօրինակ յղացները:

Հետեւեալ Հայ երուսաղէմի մէջ վերստին թափ առած կրօնականներու պատրաստութեան և կրթական գործը քսանհինգամեակ մը վերջ պիտի տար զեկեղեցիկ արդիւնք մը, երկու մեծանուն և կրթանուէր պատրիարքներու անունն ու յիշատակը պանծացնող. ու ապա անմար պիտի պահէր Հայ եկեղեցին կանթեղը թէ՛ երուսաղէմի, և թէ՛ մանաւանդ սփիւռքի մեր զլիաւոր զաղութներուն մէջ: Այսօր այդ հասած սերունդն է որ պահապան կը կենայ Ս. Տեղեաց մեր իրաւունքներուն, վեր բռնելով նոյն ատեն Հայ եկեղեցւոյ և Հայ մշակոյթի դրօշը Յորդանանի մէջ: Այդ օրհնեալ սերունդն է նոյնպէս որ կը հովուէ այսօր, յանուն Հայ եկեղեցւոյ, Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներու մեր հաւատացեալ ժողովուրդը և եւրոպայի թեմերը: Մասնաւորելով մեր խօսքը երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի և Բնծայարանի նկատմամբ՝ կրնանք առանց չափազանցած ըլլալու ըսել՝ թէ անցնող քսանհինգամեակին յիշեալ կրօնական վարժարանը ազդին ու եկեղեցին համար կատարեց ու կը շարունակէ կատարել բարերար գեր մը, զորս երբեմն յաջողեցան ունենալ հնութեան մէջ, Սիւնեաց Վարդապետանոցը, եւ Հաղբասու եւ Սանահինի վանքերը, իսկ մեր օրերուն Աւմաու Գպրեղանքը:

Երուսաղէմի ժառ. վարժարանն ու Բնծայարանը իր արդիւնքներով, ազդին ու եկեղեցին համար յայտնի Հաստատութիւն մըն է այսօր, և սակայն ցաւ է ըսել թէ անոր զոյութիւնը, Պաղեստինի ծանօթ աղէտէն ի վեր, կը մնայ անապահով, նիւթական միջոցներու չզոյութեան պատճառաւ: Արտասահմանի Հայութիւնը տասնըհինգ տարիներէ ի վեր լայնօրէն կը վայելէ մեր Գպրանոցին արդիւնքը, ոչ միայն կրօնական այլ նաև մշակութային գետիններու վրայ, ու հետեւեալ իրեն կը մնայ իր ուշադրութեան և զուրգուրանքին առարկան ընել զայն:

ԿՐԹՆԱԿԱՆ

ՇՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ

Յիսուս-Քրիստոս ...

Մարդացած Աստուած՝ Աստուած ճշմարիտ ...

Այսպէս կ'անուանէ զայն Հոգի՛, քրիստոնէական հաւատքը. այսպէս կը բանաձեռէ զայն դաւանանքը, և դուն ալ այդպէս պէտք է հաւատաս ու դաւանիս զայն անկեղծօրէն։

Յիսուս հիմնադրե՛ր է, ինչպէս զիտես, Հոգի՛, մեր լոյս կրօնքին, և հիմնադրե՛ր մեր ուղղափառ հաւատքին, հետեաբար հիմնադրե՛ր ու հիմնադրե՛ր «Թագաւորութեանը երկնքին», ըսել կ'ուզեմ՝ մեր նոր կեանքին, մեր սիրով կեանքին. սիրով փրկուած, սիրով վերստացուած ու սիրով ապրելի մեր անմահ կեանքին ...

Յիսուս-Քրիստոս ...

Մարդացած Աստուած՝ Աստուած նւիրիս ... Մարդկային իրեն և ծնունդն է Հօգի իրեն Միածին Որդի, նիւթեր հաւատքի՝ թող նիւթերը չլլան, ի՛մ քաղցր Հոգի, ո՛չ իմին տկար և ո՛չ ալ քուկին անձար մտքի թոթովանքին։ Եւ ըսեմ յաճախ և դուն ըսե՛ միայն միամիտ ու բացարձակ հաւատքիդ շնչովդ, — «Աստուած յԱստուծոյ և լոյս՝ ի լուսոյ ...»։

Ամէն ծնունդ՝ խորհուրդ է ինքնին — և ի՞նչն է այն տիեզերքի մէջ, որ չէ՛ կամ չըլլայ խորհուրդ։

Ծնունդն իր — Յիսուսին — և Աստուածայայնութիւնը, Հոգի՛, «Խորհուրդ մե՛ծ է և սքանչելի ...»։ Անձառելի այդ հրաշքին ըմբռնումին թո՛ղ տանի մեզ մեր ապրումով՝ փորձառութիւնն ու գիտութիւնը աստուածային իր կեանքին։ Խորհուրդը լսկ չի թափանցեր անոր անթափանցելի վարակովին ...

Կարդանք անգամ մը, եթէ կ'ուզես, պատմութիւնը սքանչելի այս ծննդեան։

«Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը այս

կերպով էր. անոր մայրը՝ Մարիամ, Յովսէփին նշանուած, զեռ իրարու քով չեկած՝ Ս. Հոգիէն յղացուած զոնուեցաւ։ Եւ Յովսէփ, անոր այրը, արդար մարդ ըլլալով՝ և չուզելով զայն խայտառակել, մտածեց ծածկաբար զայն արձակել։ Եւ մինչ անիկա այս բանը կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երազի մէջ անոր երեցաւ և ըսաւ. Յովսէփ, Դաւթի՛ որդի, մի վախճար քեզ առնել քու Մարիամ կինդ, որովհետեւ անոր ծնունդը Ս. Հոգիէն է։ Որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը Յիսուս զնես, որովհետեւ ան ժողովուրդը պիտի փրկէ իր մեղքերէն։ Եւ այս ամէնը եղաւ իրապէսով կատարուի Տիրոջմէն ըսուածը, մարգարէին ձեռքով՝ որ կ'ըսէ. — «Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, և ասոր անունը Իմամանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ։ Եւ Յովսէփ քունէն արթննալով՝ ինչպէս Տիրոջ հրեշտակը իրեն հրամայեց, այնպէս ըրաւ, ու իր կինը քովն առաւ։ Եւ չէր գիտեր զայն՝ մինչև իր անգրանիկ որդին ծնաւ, ու անոր անունը Յիսուս դրաւ»։

Հէքեաթի պէս քաղցր ու զբաւիչ, հոգի՛ օրրոգ, սի՛րտ անդորրոգ պատմութիւնն է այս Յիսուսի Ծննդեան։ Դիտե՛ս, Հոգի՛, անով սնած է մանկութիւնդ և զայն աւետոյ հրեշտակաց երգովն օրօրուած է անմեղութիւնդ, կանգ մի՛ առնէր ուրեմն, Հոգի՛, մէկը միւսէն անո՛յլ, աղուո՛ր, խորհրդաւո՛ր, հոգեպարա՛ր դրուագներուն Յիսուսի ծննդեան այսկերպ սքանչելի պատմութեան։ Յիշէ՛ սակայն և հոգեզմայլ դիտէ կուռ ու կուշտ, հանդիսաբանը նոր սեղման նախասօնին. դիտէ՛ կ'ըսեմ՝ մտերք ծննդեան ...

Ըսէ՛, Հոգի՛, ինչո՞ւ այդպէս այլապէցար, ինչո՞ւ հոն կը նայիս այդպէս պի՛շ պի՛շ, ըսէ՛, մի՛ ամէնար, մանաւանդ մի՛ վախճար. հոն ի՞նչ տեսար ...

Ո՛հ, հասկցա՛յ ...

Ապշի՛ր, Հոգի՛, հիմա չեմ գարմանար ... Զգո՛յլ միայն, չգայթակղիս մըռալ տեսքէն, մո՛ւթ, աղտեղի՛ և զարշաբո՛յր այդ Ախտին։ Յառէ՛ աչքերդ հոն, բարձրացիր՝ զերթ ծիրկաքին լուսափողփող՝ Ս. Մտերին, զոր լեցնող տա՛ք, խնկաբո՛յր,

փրփո՛ւր փրփո՛ւր խաբերուն մէջ, իբր կա-
կուղ օրրանի, տե՛ս Կոյս Մարիամը — Աս-
տուածածի՛ն . . . :

Տեսա՞ր, Հոգի՛, թէ՛ մին և թէ՛ միւսը
. . . խանձարրապատ գետեղած է հոն, օձն-
բաւելին երկնի և երկրի՞» իր մանուկը նո-
րածին . . . :

* *

Ինչո՞ւ սակայն — պիտի հարց տաս —
այդ Ախոռը՝ ծննդավայր Յիսուսին, «Տի-
րօջը երկնի և երկրի . . . »: Այդ իրողու-
թիւնը պատահա՞ր մըն է պարզ ու զըժ-
բախտ, թէ հոգեկեար պատկեր մըն է խոր-
հրդապաշտ ու խորիմաստ . . . : Թէ՛ մին է
թերևս և թէ՛ միւսը մանուանդ, քաղցր
հոգի՛ :

* *

Հոն փութացող հո՛ժ, բազմերա՛մ ժո-
ղովուրդին խճողումէն — Կ'ըսէ Գրիգըր —
Բեթղեհէ՛մի տուններուն և պանդոկներուն
մէջ առէ էր տեղի իջևանի . . . :

Կրնա՞յ ըլլալ ու տեղ չմնալ համե՛ստ,
աղքա՛տ ծնողներուն Յիսուսի, որոնք չու-
նէին լայն միջոցներ «չկայ»էն «կայ» չի-
նելու . . . :

Ու մենք Կ'ըսենք, Կ'աւելցնենք շա-
տերուն հետ խորհրդապաշտ մեկնումով .

— Յիսուս մարդ չէր մեզի նման, այլ
մարդացած Աստուածորդի։ Ուրիշ խօսքով՝
Անիկա սէր էր և սրբութիւն անճառելի։
Ահ, սրբութիւն՝ որոնց կաթումն ընդունե-
լու, այո՛, Հոգի՛, չկար արժանի ոնէ հոգի,
չկա՛ր ոնէ սիրտ Բեթղեհէ՛մ քաղաքին մէջ։
Ա՛յդ է պատճառը որ քաղաքէն ու տունե-
րէն դուրս մնացած — դուն խմացի՛ր՝ բա-
նաւորներու հոգիներէն ու սիրտերէն իրաց
մերժուած — գնա՛ց Յիսուս ծնանիլ Այրին
մէջ, քովը պի՛շ պի՛շ նայող անբան, ան-
բարբառ անասուններուն . . . : Խորհո՛ւրդ
անճառ, և նիւթ վսեմ խորհուրդներու
յուզի՛ն, անբա՛ւ . . . :

Ո՛հ, ի՛մ Հոգի՛, Ախոռն Իրեն ծննդա-
վայր և մուրը՝ օթօրան . . . :

Ըսուա՛ժ է ու մենք գիտենք, թէ Ա-
խոռն այդ պատկերն է ստուգատիպ և սըր-
տայոյդ, ախոռացած մեր Աբխաբին, ու
պատկերն նաև, աւա՛ղ, մեր մթաղնած ու
մեղսալիր, գա՛րջ, աղբարո՛յր հոգիներուն,

չե՛ղիս ու զազի՛ր վայելքներովը անասնա-
յա՛ժ սա մեր կեանքին . . . :

* *

Եկո՛ւր հիմա, Հոգի՛, երթա՛նք նայի՛նք
ու միասին խորհինք, խօսինք . . . :

* *

Տեսա՞ր պատկերը խորհրդաւոր ծննդ-
եան Այրին։ Եւ հասկցա՞ր խորհուրդը մեծ
հոն լուսակաթ յայտնուած Աստուածորդի՛
սէ՛ր, սրբութի՛ւն, կրա՛կ ու լո՛յս Յիսու-
սին . . . :

Այո՛, Հոգի՛, մի՛ զարմանար ու մի՛
զայնակդիր. — Յիսուս պէ՛տք էր որ հոն
ծնէր . . . : Իր սուրբ կրակով պէ՛տք էր
այրէ՛ր ու սրբէ՛ր, իր սուրբ լոյսով՝ լուսա-
ւորէ՛ր, օժէ՛ր, իր սուրբ սիրով պէ՛տք էր
վառէ՛ր, հրաշակերպէ՛ր ախո՛ռը զարե հո-
գիներուն, ալսն ու աղբը մեր սիրեւուն,
սրպեակի երկիր երկինգ դառնար ու վերա-
ծներ նոր մարդկութիւն . . . :

* *

Հոգի՛, հրաւէր մը կրկին քեզի. —

Մոռցի՛ր անյուշ պատմութիւնը Քրիս-
տոսի հրաշափառ ծննդեան, ու խորհրդա-
նշան պատկերն Այրին ծննդեան, որովհետեւ
միայն և միւսին ածնախմբումը էական չէ
կեանքիդ համար, հոգւոյդ համար, զա՛յդ
քաջ գիտցիր . . . :

Իբրև «տեղի իջևանի» էր երբեմն գա՛րջ,
աղտեղի՛, այսօր սակայն Ախոռը այդ ծը-
ննդեան՝ դարձա՛ժ է Տաճա՛ր պաշտելի, ու
սրբուա՛ժ, համբուրելի՛, յար համբուրուա՛ժ
ուխտաւեղի դարձած է այդ հաւատաւոր
մարդկութեան . . . : Թո՛ղ մնայ ան քեզի
համար ալ, իմ Հոգի՛, սրբազան վայր մը
խնկելի՛ բայց ա՛յդքան . . . : Այցելէ՛ հոն՝
և աղօթէ՛ երկիւղած. ուխտդ ըրէ՛, երկըր-
պագէ՛ և ինքնասո՞յդ խորհրդածէ, ներ-
շնչուի՛ր ու զօրացի՛ր՝ բայց ա՛յդքան . . . :

Չենք մենք յարգանքի հակառակ, ո՛հ,
երբեք։ Թող ամէն մարդ ունենայ պաշ-
տամունքի և աղօթքի իր վայրը՝ եթէ ան
ընտրուած է և բանաւոր պատճառն ունի։
Խորհէ՛, հարցո՛ւր, փնտռէ՛, գտի՛ր այդ բա-
նաւոր պատճառը և համբուրէ՛ այդ վայրը։

Էականը, կենսականը սա՛ է սակայն,
գիտցի՛ր, թէ ծնունդն այդ և ծննդավայրը՝

րուական և շենք են պատկան, թէև ըլ-
լան շնորհարե՛ր, նուիրական . . .

Ըսինք, յիշէ՛, թէ Յիսուս սովորական
մարդ մը չէր, չէ՛ր մահկանացու մեկի նման
և չէ՛ր ծնած, ապրած, մեռած մի անգամ։
Սէր-Աստուծոյ մարմնացում՝ յաւիտենական
էր և իր գոյութիւնն ալ անսկիզբ էր և
անվախճան։ Յիշէ՛, ծնունդն իր մեզ հա-
մար էր։ Ու մե՛զ համար ալ կը ծնի միշտ,
կրնա՛յ ծնիլ։ Բայց մի անգամ մարմին ա-
ռած մեզ նման և մեզ համար, յետ այնու
իր ծնունդն ալ պիտի լինի, պէ՛տք է լինի՝
հոգեկան, այսինքն՝ ո՛չ Ախտիկ մեզ Բեր-
ղենեմի, այլ այրեալ մեզ մեր հոգիներուն,
եւ մտաւրի մեզ մեր սիրեալուն՝ միշտ մեղ-
սալիր . . . որպէսզի մեր սիրեալն ու հոգի-
ները իրմո՛վ մաքրուած, իրմո՛վ սրբուած,
իրմո՛վ օծուե՛ն՝ դառնան օրբան, և այս ան-
գամ՝ օրբանք մեր ծննդեան. ու այդպիսով
հրաշափոխուած՝ անոնք դառնան սուրբ
խորաններ աստուածութեան . . .

Հո՛ս ծանօթութիւն մը, ազնիւ Հոգի,
բայց ծանօթութիւն ոչ էական, այլ ազգա-
յին մանաւանդ։

Յունուար 6 . . .

Կը յիշե՛ս, թուականն է հայ Մենդեան
և Աստուածայայտութեան։ Ո՛հ, Հոգի՛,
խորհրդաւոր թուական . . . վեցերորդ օրը
ստեղծուած, բայց Արարչին հրամանին ան-
սաստուծով մեռած մարդոց։ Մարդացած
Աստուածորդուն ծննդեան թուականն ալ
այդ — այսինքն տարւոյն վեցերորդ օրը,
Յունուար 6ը պէտք է որ ըլլայ — խորհած
էին կանխապէս, բոլոր Քրիստոնեայ աղ-
գեր։ Ինչո՞ւ վերջէն փոխեցին։ Այդ իրո-
ղութեան բացատրութեան տեղը չէ հոս.
այսքանը միայն յիշէ՛ դուն։

Տօնախմբէ՛ ուրեմն այդ օրն ազու՛ճր,
խորհրդաւոր, իմ Հոգի՛, երախտագէ՛տ,
խնդո՛տ, խանդո՛տ ոգիով, աւետելով զայն
աշխարհին ցնծալի, զանգակներու դաշն
ու զիլ զօղանջներով և վեհ տաղերու, ա-
լելուներու, շարականներու հոգեաւելի
թրթռումներովը . . .

Տօնախմբէ՛ այդ թուականը — Յուն-
ուար 6 — և մի՛ մօշնար դուն երբեք.
պատմական սխալ եթէ կայ՝ քուկդ չէ՛,
այլ ուրիշներունը։

Բայց մի՛ խաբուիր. Տօնն է այդ հրա-
շափառ յայնուրեանը Աստուածորդի Յի-
սուսին և ո՛չ Տօնը վերածնունդի ու հոգիի՛դ՝
աստուածային յայտնութեամբ ի քեզ նոյն
ինքն Աստուած-Յիսուսին՝ օրբն սէր և նը-
մարսութիւն . . .

Տօնը Մենդեան Յունուար 6ի, այո՛,
Հոգի՛, թո՛ղ մեայ քու քաղցր յիշատակդ,
թո՛ղ ըլլալ քեզ ներշնչաբան։ Բայց դուն
ունեցի՛ր և տօնէ՛՝ օրը քու վերածննդեանը։

Սէր-Յիսուսը միշտ պատրաստ է ծնե-
լու։ Ամէն օր կ'իջնէ անկա երկինքէն, և
իջևանի ի խնդիր՝ կ'անցնի մեր տան առ-
ջէն, ու կը բախէ քաղցրօրէն զաները մեր
հոգիներուն, զաները մեր սիրեալուն . . .
Պատրաստ ես՝ բաց. ա՛յդ է էականը։ Բայց
իրմով այնչուած՝ չունի՛ս բարութիւն, իր
սիրով ցօղուած՝ չունի՛ս սրբութիւն. իր
գութով չաղուած՝ չունի՛ս քաղցրութիւն,
իր լոյսով լուսաւոր՝ չունի՛ս ճշմարտու-
թիւն, իր ոգիով չնշաւոր՝ չունի՛ս արդա-
րութիւն, ո՛հ, փակած են դո՛ւն ալ քու
կարգիդ՝ զաները կեանքիդ և հոգիիդ, ի-
ջուսին առջև Սէր-Յիսուսին։ Ո՛հ, Անկա
չունի ծնունդ ի քեզ և դուն չունիս իրմով
ծնունդ . . . Ու եթէ դուն չես վերածնած
այս իմաստով, ըսէ՛ Հոգի, ինչի՞ են պէտք
զանգակները Ս. Մենդեան, ի՞նչ իմաստ ու-
նին և արժէք՝ երգած երգերդ քու փառ-
քի, երգերը սիրոյ և խաղաղութեան։ Ո՛հ,
անոնք չեն օրբանիդ չուրջ երգուած երգեր
կեանքիդ նոր ծննդեան, այլ երգե՛րն են
թաղմանական՝ զազալին չուրջ ախոռա-
ցած, ախո՛ռ մնացած՝ զազիր կեանքիդ և
գարշելի և աղբարձ՛յր մեռած հոգւոյդ . . .

Ե՛կ, բարեպաշտ իմ Հոգի, և թող այս
օրը, Բարին Աստուծոյ օր Բարի, ըլլայ եր-
ջանիկ օ՛րը մեր ծննդեան։

Տն՛ս Յիսուսը — անհուն սէր և բարութիւն
— իջած երկնից բարձունքէն, կ'անցնի մեր
տան առջևէն ու կը փնտէ իջևան, ու կը
փնտէ օրօրան՝ այրեալ մեզ մեր հոգիներ-
ուն եւ մտաւրի մեզ մեր սիրեալուն։ Բա-
նա՛նք անոնց զաները — ո՛հ, քա՛ր, եր-
կաթ — ու հանդերձնք զանոնք իբրեւ
օրբան իր Մենդեան, ու յարգարենք զա-
նոնք նաև իբրեւ օրբան մեր ծննդեան։ Թող
ան կաթէ՛ հոն՝ իբրեւ Ոգի նմարսութեան

մանաւոր է ժամանակով մը, ահաւազում ուշադիր ընթերցողը խելոյն կ'ընէ թափանցումը գրական ժամանակին դուրս կեանքին որ ուրիշ բան չէ եթէ ոչ նիւթ հագած ժամանակ մը: Լեզու, գրաբար ձեւեր, ընթացիկ բառեր այդ քերթուածը չեն յաջողեր մենաշնորհը ընել 1860ին: 1864ին, Հրանդ կեղծանունով, հանդէսի մը մէջ լոյս տեսած այդ գոհարը այսօր ալ մեզ կը յուզէ զինովը այն յուզումներուն որոնք բանաստեղծինն էին կախարդական այդ անտառատանին թաւառներուն խորը: Եղեր եմ իր հեռքերուն, այդ ծառերուն մէջէն, ապրեր անոր հովը, շուքերը, քաղցր ջուրերը, աղջիկները, թռչունները, ոգեկոչեր իր մահաբաղձ կարօտանքը այդ ամենուն ծոցը իր գտած գեղեցկութեանց վրայ ու . . . զրկեր զինքը իր Հանգիստին, քանի որ նոյն այդ տեղերուն վրայ իմ սերունդը անոր սիրածները սիրելու փոխարէն, ուրիշ տրամութիւններ, տանկցած անտառներուն արհաւիրքը կը հսկէր: Հարիւր տարի վերջ, Բայց մանաւանդ երեք քառորդ դար առաջ: Այդ քերթուածը զմայլելի գեղեցկութիւն մըն էր տակաւին վառ փառքին մէջ վաղամեռ քերթողին: 1900ին քերթուածը կ'ապրէր երբ բանաստեղծին յիշատակը ազօտանքը կը սկսէր իր վարկին: Այսինքն՝ երբ այլեւս մենք անատակ ենք պաշտպանելու մեր գործը որ այլեւս ձգուած է ճակատագրի կրկէսին: Երբ այս տողերը կը գրուին, նոյն այդ քերթուածը գրեթէ անվերածելի բերեղացում մըն է, ալ ազատուած մեր շահախնդիր, թացիկ կամ յիմար համակրանքէն, հաւածանքէն, ուրացումէն, ինչպէս այդ գեղեցկութիւնը, փառքը, բերեղացումին Անյէն, Նաւերեւելը, Նաւհրեւելը, Մէլուս, Սաւիթի, Լուսին, Անուշ, յիշելու համար քանի մը յատկանշական իրագործումներ, ժամանակէն ու պայմանէն զերծուած, դառնալու համար ցեղային բաներու խիտ վկայութիւն: Ահա թէ ինչու Մկրտիչ Պէշիկթաշլեան արեւմտահայ գրականութեան մէջ աւելի է քան անուն մը, նոյնիսկ մեծատարած փառք մը: Անիկա իմ ժողովուրդին քանի մը հզօրագոյն յատկանիշներէն վերանորոգ ապացոյց մըն է:

Մ. Պէշիկթաշլեանի սա կարգի քերթուածներուն մէջ — գրաբար որքան աշխատահարար — ես վեր կ'առնեմ մէկ քա-

նին այդ յատկանիշներէն: Արեւմտահայ գրականութիւնը ցեղային հարազատութեան տաղանայ մը ապրեցաւ լման կէս դար: Մեր քննադատութիւնը — պոլսական թեւ — այդ տաղանայը կարծեց զիմաւորել մարդկայնական զգայնութեան կոչում ընելով, որպէսզի պահուէին փառքերը Պոլսեցի գրողներուն: Մեր քննադատութիւնը — դաւառական որակուած խումբին հանդանակներով — այդ տաղանայը վերլուծեց պոլսական զգայնութեան մը չարափոխելով: Ի՞նչ կար հայեցի վենետիկցի քերթողներուն այնքան փառաբանած գործին ներքը, հարցունքն ու հերքեցին: Մկրտիչ Պէշիկթաշլեան՝ Թովմաս Թէրզեան մը չէր սակայն: Կ'անցնէին դարերը կտորներուն վրայէն, երբեք փոշի ընելով, երբեք փայլեցնելով անմար ապրումները: Զանք ըրէք մեր սըրբազան Մատենագրութեան մէջ առանձնացնելու մեղայատուկը, ազգայինը: Պիտի զգաք որ

Վարդագոյն արեամբոյ քո պսակեցեր
գեկեկեցի

տողը հայեցի է այնքան, որքան

Աւսարհս աւսարհով կեսացաւ, իս
քեզանից սով աշի լուս

տողը: Առաջինին մէջ ես կ'ապրիմ իմ Միջին դարը, իմ ժողովուրդին նուիրումը իր միակ սրբութեան իր կիրքը՝ այդ զգացումը բարձրագոյն պարզութեամբ ինչպէս բարձրագոյն խորութեամբ կերպարանուած: Երկրորդին մէջ՝ իմ զգայնութեան (որ մեր ժողովուրդին սեպհական ջղային դրութիւնը կը տեսակաւորէ հոս) ընդարձակ, համագրական, ներքին ապրումները ժուժկալ Բայց տպաւորիչ գեղեցկութեամբ, առքով, դարձեալ կիրքով՝ կերպարանելու մեր տարօրինակ զգաստութիւնը: Անշուշտ երբ կը լայնէ իր զգացումները, աշխարհներ անկէ ներս տեղաւորելու սա բնականութեամբ, զիւրութեամբ, կ'ընէ, այսքան հեռունքէն. ան, զօր արեւմտահայ գրականութեան ամենէն շնորհալի քերթողները պիտի ընէին այդ 1870ին, 1900ին, 1930ին: Մ. Պէշիկթաշլեանի մեզքերը, կան անոնք, բաւական թանձրութեամբ: Բայց ինչ կարիք ատենցմով յօրանալու: Կործանեցէք այն փառքերը որոնք մինակ մեղքերու կամարներուն վրայ եղան ամբարձիկ: Բայց

պատկառ եղէք այն վկայութեանց զիմաց որոնք մեղքին հետ կը բերին մեզի սխրանքն ալ անգնելի անմեղութեանց։

Մկրտիչ Պէշիկթաշեանի քերթողութեան մէջ — յաջողակները անշուշտ կ'առնեմ նկատի, մոռնալով նոյն ատեն ամէն վարկ, հիացում, ուրացում, այդ անունին հետ մեզի հասած — կը ծանրանամ

—) այն հարազատ քաջութեան, Դուրեանին բառովը մեղաւորութեան որ այս քերթուածներուն ներքին բարեխառնութիւնը, զգայական խտութիւնն ու միութիւնը կը պայմանէ։ Մի աճապարէք արագ ընդհանրացումներով այդ զգայութիւնը բացատրել յաւակնիլ բանաստեղծին կեանքովը, սրտին, սիրոյն ճազնապնդովը, ու այն խուլ, մահաթրթիւ հոգեդրութեամբ որուն մէջ բացուեցան ու արեւի չինկած ծաղկի մը պէս թոռմեցան անոր պատանութիւնը, անդրանիկ երիտասարդութիւնը ու հէքեաթունակ անոր երկրորդ երիտասարդութիւնը . . . : Մտածեցէք ուրիշներու, բոլոր մեր իրաւ բանաստեղծներուն, որոնց քերթուածներէն մենք կ'ունենանք մերձաւոր զգայութիւններ։ Մի ըսէք որ վարուժան տրամալար բանաստեղծ մըն էր կամ Մեծարեցը, Թէքէեանը, Սիւսանթոն, Եղիշէ Եպս. Դուրեանը, վասնզի ապրեցան ծանրաթախիծ կեանքը իրենց ժամանակներուն։ Մի բերէք տեսարան հիւանդութիւնը, աղքատութիւնը, զրկանքը՝ որպէսզի հասկնալի դառնան Մկրտիչն ու Պետրոսը։ Եղէք աւելի զգաստ ու այդ թախծութիւնը պուտ պուտ վերակազմել սիրեցէք ձեր պապերուն դարերէն։ Ու եղէք վստահ որ սխալի մէջ չէք, երբ այդ հոգեխառնութիւնը դուք կը զգաք ձեզի ծանօթ բոլոր վկայութեանց ալ ներսը, շատ վարեղէն, հեռուններէն։ Առէք

Երկներ երկին եւ երկիր

Երկներ եւ ծիրանի ծովը

որ շատ խորունկ ապրումներէ հրիտակ մըն է ու գրէք ձեր զգայարանքներուն ընկալչութեանը։ Պիտի գտնէք որ տրտում է այդ կրակով լուսաւորուած պատառիկը։ Ուրիշ, ինչո՞ւ։ Հարցուցէք ու կարդացէք ուրիշ ժողովուրդներէ մեզի հասած զարձալ հեռու վկայութիւնները։ Ամբողջ Իլ-Էն-Նը, Շէն գիրք մը չէ անշուշտ։ Բայց երբեք

թախծահար, Համակ խնդութիւն՝ Ոչ-չէն։ Ու այս կարգով բոլոր մեծ վկայութիւնները հին ժողովուրդներու։ Թախծութիւնը հոգիին մոլնմն է, մեր ժողովուրդին համար անառարկելի ստուգութեամբ։ ԺԱ. դարուն Մազխարոս տրտում ըլլալու մասնաւոր պատճառներ ունէր իր շուրջը։ Բայց տեւէք թէ ինչպէս կեանքի, խանդի, հուրքի ապրումները ինքնաբերաբար կը մտնեն սուգի շղարշին տակ

Ո՛ր սայր ինձ զծովս ծրխանի

եւ զառաւօտն Նաւասարդի

Զվազելն եզանց եւ զվազելն եղբրուաց։

Մեք փող հարուաք եւ քմկի հարկանեաք։

Անշուշտ։ Մազխարոս կուլայ այդ փառքերը ոգեկոչած ատեն, թերեւս ըլլալով նման սկզբնաղբի հեղինակին որ այդ չքեղ տողերը կ'անձրեւէր իր շուրջը խոնուած տարօրինակ մարդոց, բոլորն ալ իրենց ցաւերը ծրար ըրած, հայոց աշխարհին հեռու անկիւններէն, դէպի ափերը նուիրական գետին, տօնելու Անահիտի տրտմանու զգեցկութեան հրաշքները . . . : Հայ գրականութեան ու արուեստի միւս կերպարանքներուն, ինչպէս այդ ժողովուրդին կենդանի կերպարանքներուն, նայուածքին ու ձայնին մէջ զգալի սա երանգը թախիծին։ Ահա թէ ո՛ր նուրբ լարերով այդ վնասիկցի, Պոլսեցի, հոսնոս բառերու պաղիրկեան եւ ըրտասարդը կը տարուի իր ժողովուրդին ամենէն հարազատ խառնուածքին։ Ու կ'աւելցնեմ որ սա հաստատումը այդ տողերը կ'ազատագրէ, կը զերծէ հետտրեւալ լաւկանութենէն, բռնաժապտակ տրտմութենէն (որուն ոսկեդարն էր 1830ի ոտմանթիւմը եւրոպական մշակոյթին կարեւոր բաժանմունքներուն համար), որոնք նոյն չափով իրական են սակայն մեր երկրորդ գիծէ քերթողներուն մօտ։ Եղիւն իր և կեանքին ընդմէջ մուրուած ապակի մը գործածեց։ Որբերեան աշխարհը սեւ տեսնելու համար ինքզինքը տարագրեց։ Սէթեան վայելչութեան հով մը կը գտնէր իր տրտմալար թութովանքներուն մէջ։ Մկրտիչ Պէշիկթաշեան այդ տրտմութեան չմտածեց նոյնիսկ։

Յ. ՕՇԱԿԱՆ

(Ճարուհակիլի)

ԳԳՈՒԱՆՔՆ ԱՆՁՐԵԻՒՆ

Փեղկիս վրայ, հոգոյս վրայ, սարաւսարհիկ գգուանք մը կայ.
Համասարած անձրեւն անա, ամբողջ քաղիքն համար կ'ուլայ.
Երկինքն արդեօք խի՞ղն մ'է հսկայ, որ մարդերուն մեղքը կուլայ ...:

x

Անձրեւն արտօր է ա՛յ սը՛ղայ, սիրողներուն անդարձ մեկնած
Որոնք սիրածն իրենց երբեք այս աւխարհին մէջ չգրսան.
Յաւերժօրէն անոնք կուլան, սիրողներու արցունքն է ան:

x

Փեղկիս վրայ սարաւսարհիկ ցայգանքւագն է մտքովիկ
Ահաւասիկ կ'անցորանայ կեանքն ապրելուն տաժանքն հսկայ,
Զի ան հիմա իմ հոգիս երես դաշին վրայ կ'իյնայ:

x

Սիրողներու ծո՛ւլ ծո՛ւլ քափուող, իրօք արցունքն է անիկա
Թէ հեքեաթին լայն աղեղէն նեւեր ժահրոս, նեւեր երկար
Մտերուն քար, մարդոց յիմար. չե՞ս հաւատար, մամա է վրկայ:

x

Ահաւասիկ կ'անցորանայ կեանքն ապրելուն տաժանքն հսկայ.
Զի կը տեղայ, դեռ կը տեղայ, իբրեւ ձայներ հոգեհրմայ
Ամպարագիծ չարին վրայ, իցիս թէ ան օրհնէնք մ'ըլլայ:

x

Ծեծէ՛ անձրեւ, ծակէ՛ անձրեւ, արտերը քա՛ր, մարդոց յիմար:

ԶԱՒԷՆ Ա. 2.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Պզտիկի մը արարմին համար

Կեանքդ դառնայ բոլ համբայ մը դալար,
 Արեւով լեցուն,
 Որ բանայ աչին կախարդանքն օսար
 Լոյս աշխարհներուն:

Թող կեանքդ ըլլայ նրման մշտնոս
 Վընիս աղբիւրին,
 Որուն երկարին արքները ծարաւ,
 Յոգնած անցորդին:

Դառնայ կեանքդ բոլ նոճեսան մ'աղուոր,
 Երգովն իր վայրի,
 Որուն զան բացուիլ արեւ վիրաւոր,
 Արեւ ամայի:

Կեանքդ դառնայ բոլ ծովափ մ'ապահով՝
 Փոքորիկէն վերջ,
 Ուր զան խարսխել նաւեր փովէ փով,
 Խաղաղ ծոցին մէջ:

Թող կեանքդ ունենայ խորհուրդը խորին
 Մեր ճանարներուն
 Ու դառնայ մենեղ, որուն մեղեդին
 Տայ երգը ՄԱՐԴՈՒՆ:

Նիկոսիա

Վ.Ա.ՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՐԵՆԱՑԻԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

4

Վիստոնեան հրատարակությունը ուշագրություն պիտի գրաւէր: Բանասէրներ և պատմագրողներ չէին կրնար անտեսել նորագրւած այս հնագիտական աղբիւրը, զոր անուամբ Հինգերորդ դարուն, որուն գունէ Զորրորդ և Հինգերորդ դարու մինչև կէսը տուած տեղեկությունները, որպէս հեղինակի ժամանակակից կամ մերձակայ զէպքերու նկարագրություն, պիտի ուսումնասիրուէին, պիտի բազմաթիւն Ամմանոս Մարկելինոսի, Սոզոմէնի, Թէոդորէի և մի քանի ուրիշ Հինգերորդ դարու պատմիչներու հաղորդածին հետ:

Տասնութերորդ դարու բանասէրներ աւելի ծանրացան Խորենացիի Պատմութեան առասպելախառն զէպքերու, պատմական անճշդութեանց վրայ, քան իր ժամանակի մասին:

Հռչակաւոր Էտուարտ Կիպոն, մեծագոյն պատմաբանը, Տասնութերորդ դարու վերջին քառորդին հրատարակած իր գլուխ գործոցին մէջ, *The Decline and Fall of Roman Empire*, Խորենացիին ուսումնասիրած էր որպէս իր բազմաթիւ աղբիւրներէն մին, թէև և կ'անդոսներ հայ մատենագրի պատմագրական ձիրքը:

Տասնիններորդ դարու ընթացքին, քրննագիտներ, ի սկզբան յամբարար և տատանումով, Խորենացիի Պատմութեան մէջ յիշատակուած քանի մը զէպքերը բազմաթիւով Յոյն և Լատին հեղինակներու կողմէ ներկայացուածին, և անոնց կողմէ սոյն զէպքերու տրուած տարբերութիւններ, կապուած յայտնեցին թէ հայ պատմաբանը, հակառակ իր պնդումին, Հինգերորդ դարու հեղինակ չէր կրնար ըլլալ:

Սա պիտի ծառայէր բանասիրական ենթադրութեանց կնիքը քակելու, և ո՞վ զիտէ, ո՞ւր կրնային յանգիլ անոնք, եթէ երբեք վերջ մը գտնէին:

Հայր Գաթրճեան, Վիեննայի Միսիստիկա-հաննիքէն, իր *Silberne* Պատմութեան մէջ, առանց խոր ուսումնասիրութեան, կարծիք յայտնեց թէ Խորենացիին Հինգերորդ դարուն յաջորդող ժամանակաշրջանի մը պատկանած ըլլալու է:

Տասնիններորդ դարու սկիզբէն իսկ Ֆրանսացի գիտնականներ, առաւել քան գերման կամ ուրիշ ազգերու բանասէրներ, հաշտակաւ մարդանքներու միջոցով ցան:

Դարու կէսին, Էթիէն Բաթրմէր աւելնով մէկը ուրիշ նոր և յախուռն ելոյթով մը հրապարակ եկաւ: Ան յայտարարեց որ Խորենացիին Հայոց պատմութեան հնագոյն ժամանակաշրջանի համար միակ աղբիւր ցոյց կուտայ — բացի ազգային վիպասանութիւններէ և անգիր աւանդութիւններէ — Ասորի հեղինակ մը, Մար Արաս Կատինա: Այսպիսի անձ մը, ըսաւ Պր. Բաթրմէր, գոյութիւն չէ ունեցած: Ան պարզապէս Խորենացիի երեւակայութեան ծրնունդ է, հետեւաբար հայ պատմիչի մինչև Վաղարշակ թագաւոր գրածները յերիւրածոյ բաներ են և բոլորովին զուրկ արժանահաւատ պատմութիւն ըլլալէ:

Սա անակեղալ ուղղութենէն յարձակում մ'էր ձեռնարկ հայ մատենագրի վրայ: Թերեւս առաջին անհարկութիւն մը Խորենացիի խաբարայական մտամարդանքին: Ահաւասիկ չէնքով չնորհքով մարդ մը, որ կուգար յայտնելու թէ գործերնիս վարպետորդի խեղաթիւրոյթի մը հետ է:

Ուրիշ Ֆրանսացի բանասէր մը, Ֆրէրէ, նման Բաթրմէրի, պնդեց թէ Մար Արաս Կատինան գոյութիւն ունեցած չէր: Հայերէն, Էթիէն և Գարապաշեան համոզուած էին թէ Մար Արասի քաղաքական մատենանը կեղծիք էր:

Միւս կողմէ, Վիկտոր Լանկուան պնդեց թէ Մար Արաս իրական անձնաւորութիւն մ'է, որ ապրած է Առաջին դարուն Յ. Ք.: Էթիէն Ռընան, նշանաւոր Արեւելագէտը, ոչ միայն կ'ընդունէր թէ Կատինան գոյութիւն ունեցած է, այլ Եղեսիոյ զպրոցին պատկանող քրիստոնեայ մը եղած է:

Քրիստոնեայ Եկեղեցւոյ Հայրերէն, բազմահատոր գործերու հեղինակ, Ար. Յերենիմոս, Հինգերորդ դարու սկզբնական

չըջանին, իր դործերէն միայն մէջ, Եղեկիէլ Մարգարէի մասին գրուած, Կատինայէն մէջընկերուի ըրած էր: Հաւանաբար Ռենան և իրեն պէս մտածողներ այս պարագան գիտէին:

Յիշենք նաև թէ, Նիկոլայ Ման, որ Բարիլի մէջ 1896ին յայտնուած Մարիրաս քաղաքացւոյ ժամանակագրութիւնը ուսումնասիրեց, իր քննութեան արդիւնքը հրատարակեց 1902ին, որով ցոյց կուտար թէ Խորենացին շատ մը կէտերու մէջ Մարիրասի հետեւած էր: Այսպէս, Խորենացին Եղեկոյ թագաւորները հայացուցած էր, նոյնը ըրած Մարիրաս: Կամ, Հերովդէսի մասին խօսելուն՝ Խորենացին դայն օձերովդէս Ագրիպասը կրկնանունով կոչած էր, և որովհետև ուրիշ պատմաբաններ Ագրիպաս անունը չեն յիշած, Փրանսացի Գարիէր ամբաստանեց թէ այս ալ Խորենացիի հնարածն է: Մարիրաս սակայն կը յիշէր այս երկրորդ անունը:

5

Խորենացիի Պատմութեան գրուելու ժամանակի մասին առաջին լուրջ ուսումնասիրութիւնը կը գրէր գերմանացի մը, Ալֆրէտ Գուշմիտ:

Նախապէս ան, 1873ին, գրած էր թէ Հայոց Պատմութիւնը Հինգերորդ դարու վերջին քառորդին գրի առնուած է: Երեք տարի վերջ ան գրեց թէ Խորենացին Եօթներորդ դարուն յօրինած է իր գիրքը, 634 և 642 թուականներու միջև:

Գուշմիտ կ'ըսէր թէ Խորենացին իր Պատմութեան մէջ կը յիշատակէ Հայաստանի չորս գաւառներու բաժնուիլը: Այս բաժանումը պատահած էր Վեցերորդ դարուն, 536ին: Յետոյ Խորենացին կը հաղորդէ Պարսիկներուն մինչև Բիւթանիա յառաջանալը: Այս գէպքը տեղի ունեցաւ 609 թուականին: Հետեւաբար Գուշմիտ կը յարձակէր Խորենացիի Պատմութեան արժանահաւատութեան վրայ: Եւ մակերեսային դիտողի մը համար սա տրամաբանական հետեւութիւն էր: Երբ կ'ըսես թէ Հինգերորդ դարու մատենագիրն ես, և զբքիդ մէջ Եօթներորդ դարուն պատահած գէպքի մը յիշատակութիւնը կ'ընես, ալ ի՞նչպէս կ'աղնկալես որ հաւատ ընծայուի քեզի:

Գուշմիտ և իրեն հետ ու իրմէ վերջ նման ելոյթով ճամբայ ելլողներ մէկ պարագայ խաղառ մոռցան:

Իրենց քննութեան առարկայ ըրած գիրքը մեր ձեռքը հասած էր, դարերու ընթացքին հաղարուոր ընդօրինակութիւններ ունենալէ վերջ: Մենք չունինք Խորենացիի ձեռագիրը, ոչ աչ իրեն ժամանակակից կամ իրմէ զոնէ հարիւր կամ երկու հարիւր տարի վերջ կատարուած ընդօրինակութիւն մը:

Մեր ձեռքը հասած են յիսունի մօտ ձեռագիրներ, որոնք գրի առնուած են 1500ական թուականներէն վերջ: Ըսել է ատկէ առաջ հազար տարուայ ժամանակաշրջանի մէջ կատարուած հազար կամ աւելի ընդօրինակութիւններէն և ոչ մին հասած է մեզի: Ուրեմն ինչ որ ունինք հաղարուոր ընդօրինակութիւններէ վերջ եղած օրինակներն են:

Իսկ ուսումնասիրողի համար ուրիշ բոլորովին անբաղձալի պարագան այն իրողութիւնն է, որ մեր այժմ ունեցած ձեռագիրներն իսկ սակաւին իրարու հետ չեն բաղդատուած: Սա անհրաժեշտ և անշուտաձգելի նախաքայլ մը պէտք էր ըլլալ քննադատական որևէ լուրջ աշխատանքի:

Պահ մը մոռնանք թէ Բաղրատունեաց թագաւորական շրջանին Խորենացիի Պատմութիւնը նոր խմբագրութեան ենթարկուեցաւ, ինչպէս կ'ընդունին շատ բանասէրներ, և մեր խորհրդածութեան նիւթ դարձնենք այն վտանգները, որոնք ընդհանրապէս անբաժան են ձեռագիրներու ընդօրինակման ձեռնարկներէն:

Յիշենք մէկ քանին որ սովորական են: Ակամայ սխալներ կամ անմեղ վրիպումներ: Զոր օրինակ. ընդօրինակողը կըրնայ բառը սխալ կարգաւ, իրարու նմանող գրերը շփոթել, կրնայ տողէ մը անմիջական յաջորդին անցնելու փոխարէն, ցատկել երրորդ տողին: Ուրիշի կողմէ լուսանցքի մէջ գրուած բառերը որպէս նիւթի անբաժան մաս ընդօրինակել: Կամ անզգոյշ կերպով գրի առնուած ձեռագրէ մը օրինակել տողեր, որ կամ իրար խառնուած են, կամ սխալ դասաւորուած:

Եթէ ընդօրինակումը կը կատարուէր բարձրաձայն կարդացողի մը ունկնդրելով, ինչպէս յաճախ կ'ըլլար վանքերու մէջ Մի-

ջին դարերուն, երբ մէկը դանդաղօրէն կը կարգար և տանեակ մը ընդօրինակողներ գրի կ'առնէին կարգացուածը, նմանահնչիւն բառերու սխալներ, կամ կարգացողի ոչ-յատակ առողանութենէն ծնունդ առած վրիպակներ: Թերեւս այս վերջինին որպէս օրինակ կրնանք տալ հայ պատմիչ Սերէոսէն: Զեռագիրը ունի այսպէս «Զհրամանս բուսեիւով իշխէ»: Սա նշանակութենէ զուրկ է: Ուղիղ ձեւը. «Զհրամանս սպուսեի Ժժ իշխէ»:

Կան սակայն աւելի ծանրակշիւ սխալներ կամ փոփոխութիւններ, որոնք կը կատարուին գիտութեան կերպով: Այսպիսի դարտուցումներու տուն տուած կրնան ըլլալ ընդօրինակողի անձնական նախասիրութիւնները, կուսակցական տեսակէտները, փիլիսոփայական, ընկերական կամ պատմական ըմբռնութիւնները, և երբեմն ալ «ճատ-բան-գիտեմ»ութիւնը:

Գիտութեան փոփոխութիւնը կրնայ բարի նպատակով ըլլալ: Ընդօրինակողի տրամաբանութեամբ բարի նկատուած: Զորօրինակ, ձեռագրին պարունակութիւնը ալ աւելի ճոխացնելու և սխալ կարծուած նախադասութիւն մը շտկելու: Եթէ օրինակողը հեղինակէն քանի մը հարկէր տարիներ յետոյ կ'ապրէր, որոնց ընթացքին հեղինակին կողմէ յիշուած պատմական գէպք մը նոր վերլուծման ենթարկուած է, կամ ուրիշ աղբիւրներ գտնուած, որոնք սակայն սոյն գէպքը տարբեր կը ներկայացնեն, կամ հեղինակին կողմէ անտեսուած մանրամասնութիւն մը ի յայտ կը բերեն, այն ատեն օրինակողը խղճի կատարեալ հանգարտութեամբ «ճշգրիտ» է և «ամբողջացուցած» հեղինակին թերի ձգածը:

Կամ հեղինակի մէկ կամ միւս նկարագրական նախադասութիւնը գրական կամ գեղարուեստական շնորհքէ բոլորովին զուրկ նկատելով, կամ զուրս ձգած է, կամ ինքը նոր մը շարադրած, և կամ ուրիշ հեղինակէ մը միտքը մնացած փայլուն նախադասութեամբ մը փոխանակած:

Կամ սեպենք օրինակուածը աշխարհագրական գործ մը եղած ըլլայ, հեղինակի կողմէ «մոռցուած» քաղաքի մը անունը աւելցուցած ձեռագրին, առանց անդրադառնալու թէ սոյն քաղաքը հեղինակի մահէն շատ վերջ կառուցուեցաւ, կամ նշանաւոր դարձաւ:

Իսկ եթէ ընդօրինակողը ամենագէտի հոգի բաժնի խալ մտաւորական մ'է, — և անոնց թիւը շատ ու շատ էր —, ա՜ն դիւրաւ հեղինակի «սխալները» կը գտնէ, և հպարտ ինքնագոհացումով մը կը նկրտի շտկել զանոնք: Կամ իրեն համար գծուար իմաստ նախադասութիւն մը՝ դիւրամբոնելի կը դարձնէ, այսպիսով երբեմն փոխելով թէ պարունակութիւնը և թէ միտքը:

Օրինակ, Ժ.Ն. զարու Վերածնունդի ընդօրինակողներուն շատերը մասնաւոր ճիշդի գործ գրին բազմաթիւ հին և գտնական ձեռագրիներ հասկնալի դարձնելու, հետեւաբար այն ամէն պարբերութեան, որ իրենց հասկացողութենէն վեր գտան, չըտկեցին շտկեցին, ու այսպիսով բազմաթիւ հին գործեր ենթարկուեցան աղաւաղումի:

Երբեմն գիտութեան փոփոխութիւնը կը կատարուէր յետին նպատակներով: Օրինակ, կողմնակցական կամ աղանդամուկան տեսակէտ մը առաջ քշելու, և կամ քաղաքական դաւանանք մը քննադատելու:

Սեպենք ընդօրինակողը իշխանական տան մը բարերարականքէն մին ըլլայ: Ան սանկ բարոյական կամ երախտագիտական պարտք մը կը համարէ՝ սոյն ընտանիքի նախնիքներէն միոյն մասին ձեռագրի մէջ գտնուող խիստ անհաճոյ ակնարկութիւն մը մեղմացնելու: Իսկ եթէ բարիծաղիկը «մեղմացուելով» ալ կլլուկիք ապրանք չէր, այն ատեն ընդօրինակողը բոլորովին զանց կ'ընէ անոր յիշատակումը, որով յաջորդական օրինակներ ալիս լուռ կը մնան ապրիւտի մասին:

Ասոր հակառակն ալ ճիշտ է. Հակառակորդ կամ մրցակից ընտանիքի մը արժանիքները կամ հերոսական գրուածքները նսեմացնել:

Եթէ ընդօրինակողը կրօնական շեշտուած համոզումներ ունի, ձեռագրին կարգ մը մտքերը իր ըմբռնութիւններուն թելադրած վիրարութեան զործողութեան ենթարկելու մէջ քրէական յանցանք մը չտեսներ: Օրինակ, Հրեաներու մեծ պատմաբան Յովսեփոսի զրքին մէջ, Յիսուսի մասին զբառնուած գնահատական հակիրճ յիշատակումը, նոյն իսկ քրիստոնեայ բանասէրներու կողմէ կ'ընդունուի, ընդօրինակողի մը կողմէ ներմուծուած:

Շատ անգամ ընդօրինակողներու անմեղ կամ դիտումնաւոր փոփոխութիւնները յաջորդական օրինակներու մէջ կը բարդուին: Օրինակ, վեցերորդ դարուն «սրբազրուած» ձեռագիր մը, յաջորդ դարուն գրիչ մը կ'ընդօրինակէ զայն, առանց գիտնալու թէ այդ «ճշգումներու» ենթարկուած է, և թերեւս իր կարգին ալ կը սրբագրէ: Դար մը վերջ, խղճամիտ ընդօրինակող մը, որ վճռած է իր կողմէ որ և է փոփոխութիւն կամ սրբագրութիւն չկատարել, պիտի օրինակէ երկու անգամ փոփոխութեան ենթարկուած օրինակը, որպէս հեղինակի խկական գործ, առանց գիտնալու թէ օտար մատ խաղցեր է:

Աւստի երբ հին մատենագրի մը գործը քննելու կը ձեռնարկենք, որը հարիւրաւոր աւարիններու ընթացքին հարիւրաւոր, թերեւս հազարաւոր ընդօրինակողներու ձեռքէն անցեր է, մենք երբեմն ծանրակշիռ սխալ մը կրնանք գործել հեղինակին վերագրելով պարբերութիւններ, որոնք իրականին մէջ ուրիշներու կը պատկանին:

Այս վտանգը մասնաւորաբար և բացառապէս գոյութիւն ունի երբ քննուելիք գործը պատմութեան գիրք է: Առաւելապէս պատմութեան և աշխարհագրութեան վերաբերեալ ձեռագիրներն են, որ աւելի շատ ենթակայ են փոփոխութիւններու, կամ յաւելումներով և կամ յապաւումներով:

Աւ այդ աւելի քան ճիշտ է Խորենացիի պարագային:

Որ այդ ուրիշներէ խմբագրուած է մի քանի անգամներ, ինչպէս Նիկիոյ Մատ կը կտրծէ, ընդունուած է շատ բանասէրներէ: Վատահօրէն կարելի է ըսել թէ Խորենացիի Պատմութիւնը, Բագրատունեանց փառքի հասնելու օրերուն ենթարկուած ըլլալու է նոր խմբագրութեան մը, որը կը բացատրէ շատ մը նկատելի զարտուգութիւններ Պատմագրքին մէջ:

Խորենացիի քննադատներու Հարուածային Դուրմարտակը, քաջ գիտնալով հանդերձ վերոյիշեալ երեւոյթները, քաջարար անգիտացան զանոնք, և իրենց ի սկզբան առաջադրած առեղծուածը, շնորհիւ իրենց ապշեցուցիչ մտամարզանքներու, Լաբիւրինթոս դարձած, սպառնց իրենց աւելնը, որ արժանի էր բանասիրական աւելի արգիւնաւոր ուսումնասիրութեանց մէջ փայլելու:

ՀՐԱՆԴ. Ք. ԱՐՄԷՆ

(Շարունակելի՝ 2)

ԳԻԼԳԱՄԷՇԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Մտածումի երկու բեւեռներ կը հաւասարակշռեն քերթուածին զնայքը: Առաջինը՝ անմահ յիշատակ մը կտակելու փառսիրութիւնը. երկրորդը՝ մահուան անխուսափելիութիւնը:

Ա. — Դիւզամէշի հրայրքոտ տենդը՝ արկածախնդրութիւններու վտանգը հեղինոգ քաջասրտութեամբ, կը բխի իր նիւթական ճղճիմ եսը նուաճելու կրծող մտահոգութենէ մը: Դերազանցել երկրաւորին զետեաքարշութիւնը, երկնաւորին ճախրանքով վեհաւայց: Արքայական կենցաղի մեղկացուցիչ կապանքները կ'ուժաթափին կաշկանդելու լայնածաւալ ընդդրկումները իր գաղափարատենչ հոգիին: Դերման ցեղապաշտներու, ու մասնաւորապէս «զօրութեան կամքի» իմաստասէր՝ Նիցչէի ubermensch՝ «գերմարդը», Բրիտտոսէ երկուքուկէս հազարամականեր առաջ, Տիգրիս — Եփրատեան հովիտի բնակիչը մարմնաւորած էր զայն, սխրագործութիւններով օժուէ Դիւզամէշի անձին մէջ: Zarathustra-ի հեղինակը, կը զուգակշռէ գերմարդը մարդուն, մարդը կապիկի հաւասարի աղերսով: Մարդը ուժական գոյութեան մը թափը կը ներամփոփէ իր մէջ: Նաւահանգստի մը ժամանման կայական մեղեկութիւնը չի ներշնչեր, այլ կամուրջի մը նուաճելու թեան յառաջխաղացքը: Դերմարդուն նըկարագիրը բնորոշող զիծեր: Բուռն հաւատ մը, պաշտամունքի պատրաստակամ զոհողութեամբ, վտանգները վհատեցնող: Դիւզամէշ իր աննկուն կամքովը արտասովոր ճիգեր արձանագրելու «անջնջիլի հետքի» մը սիրոյն, կը գերմարդանայ՝ զիւցաղներգութեան սճով՝ կ'ատուածանայ, որովհետեւ իր երկու երրորդը աստուած էր, իսկ մէկ երրորդը մարդն:

Բ. — «Երբ աստուածները ստեղծեցին մարդկութիւնը, մահը վիճակեցին մարդոց որդիներուն, իսկ անմահութիւնը վերապահեցին իրենց»: Ահա՛, սկեպտիկ իմաստա-

166-98



սիրութեան կերպարը զից պահանջութեան, մահուայ անվիճելիութիւնը ողբերգոյ և անուշաբանութեան այս անողոք վճիռը, չի թեքեցաւ նոյնիսկ Գիլգամէշի մը գերմարդու գերակշռութենէն: Ծակատագրի խաբուսիկ ժպիտը պահ մը կը հրահրէ իր յոյսերը «վերերիտասարդման յուսութիւն»-տունկը» զիւտովը, օձի մը նենգամիտ միջամտութիւնը, ափսոս, կը խլէ այդ բոյսը Գիլգամէշի ճաշակումէն: Քողաղերձենք թաքուն խորհուրդը սա տողերու պատեանէն: «Վերերիտասարդման յուսութիւն»-տունկը» զրախտաբանական երանաւետութիւն մը կը յիշեցնէ, սակայն կորուսեալ զրախտի կըսկիծը ունի իր մէջ: Մարդ — արարածը անոր կարօտախտէն կը հիւժի: Օձը կը փոխարինէ անմահութեան անմատչելի գաղափարը՝ մարդկային երեւակայութեան ամուլ խաբխափութեան կնիքը զրոշմած է մարդու զոդող սրտին վրայ: Տակաւին անոր — շիրմեան կեանքը կը մթագնի չարագուշակ անակնկալներով: Մարդոց որդիները, առանց դասակարգի, մեղաւորի և արդարի խտրութեան, պիտի ոչնչանան լուսազուրկ տանջարանին մէջ, թէ և տասներկուերորդ տախտակը, մեղմացում մը կը ներմուծէ այդ վշտայոյզ ովկիանին մէջ: Կեանքի և մահուայ այս մօայլ պատկերին առջև, Գիլգամէշ կը ներթողէ հնչտասիրական իմաստասիրութեան մը նախընտրանքը, մեր ակնթարթային գոյութեան երկայնքին: «Կեր, արբ, ուրախ լիբի» եպիկուրեան աշխարհայեացքը՝ Բարելացիի նիւթով ճահիճուած հողիին համար, եկուոր գաղափարաբանութեան մը ահազանգը չի հնչեցներ: «Տեսանելիով իր երջանկութիւնը բաւարարելու» ռամկացած նիւթապաշտութիւնը կը պատգամէ Գիլգամէշ մարդ — էականերուն, իբրեւ միակ բաժինը, իրենց խօլ վաղքին մէջ կեանքի պայքարի: Ահա, Գիլգամէշի գերմարդկային որոնումներուն անփառունակ արգասիքը:

ՄԱՀՐ ԲԱՐԵԼԱՅԻՆԵՐՈՒ ԵՒ ՀԻՆ ՈՒԽՏԻ ՄԷՋ

Ա. — ԲԱՐԵԼԱԿԱՆ

«Երբ աստուածները ստեղծեցին մարդկութիւնը, մահը սահմանեցին մարդոց որ-

դիներուն, իսկ անմահութիւնը վերապահեցին իրենց»: Ահա, Միջագետեան նիւթապաշտ մոլեռանդութեան զարեւիլ սեւեռումը, որ կը տարածէր իր ընդգրկումը, բուսական և կենդանական մարդիւր: Վրայ մինչև: Աստուածներու ահաւական աւանդութիւնը անմահութեան, բռնութեան հետեւանքով, եղծանուկու մղձաւանջէն կը վտանգուէր: Թխամաթ — Մարտուք աստուածներու մենամարտը Թխամաթի մահովը վերջացաւ: Էա աստուած սպաննեց Աքուսն և Մուամուն: Իսկ, սեւ գիրը որ կը մրտէր մարդ արարածին աստուածատիպ ճակատը, հակազդեցութիւնը չէր մեղքի անկումի մը անելին, այլ ցնորամիտ երեւակայութեան մէկ մանկամիտ խաբկանքը թէ մարդ էակը անբաղձալի Գինկու աստուծոյ կողմէ քստեղծուելու զժախտութեամբը, անդդաւմերձ՝ արտասուքի հովիտի մը ուղեւորութեան կը դատապարտուի: The Gilgamesh Epic and Old Testament Parallels, by Alexander Heidel, Chicago, Illinois, էջ 137:

Դիցաբանական այս զրոյցը կը բախտաւորուէր մարդու բնախօսական կերտուածքին Իրականութեամբը: Մահը մարմնի և հողին անջատման գործողութիւնն էր: Մարմինը կը մխրճուէր իր յաւերժ նինջին մէջ, հողին ծօցը, մինչ հողին՝ բարի կամ չար վարկով, կը մեկնէր աղջամղջային ստորերկրեան, լուսազուրկ կայանը՝ անվերադարձ երկիրը, ուր փռնի է հանապազօր սնունդը տակաւ առ տակաւ հողիներուն: Արդ, մահը կենսական թուիքին կատարեալ անէացումը չէր ենթադրեր, այլ շօշափելիին և անտեսանելիին վշտայոյզ բռնէն:

Մարդը, աստուածներու ուղիէն շեղելով, կ'երագեցնէր զալուստը սեւամաղձ ստուերին: Մինչ, տաճարներու բարձրացումով, աղօթքով ու խունկով օծուն կեանք մը յապաղիլ կուտար բնութեան անողորմ օրէնքին յարձակողականը երկիւղած հողիին վրայ: Երբեմն ալ, բարեպաշտ արարքներ չէին երաշխաւորեր յամեցումը ճակատագրի վճիռին:

Անմեղն ու մեղաւորը, զիտունն ու տգէտը, ազնուականն ու ռամկը անխըրաբար կը տժգունին շիրմի նսեմութեան մօայլէն: Մահուայ ճիրաններէն չի կրցաւ պրծիլ նոյնիսկ գերմարդու հոգակով Գիլգամէշը, որքան հեղեանք պիտի տոթէր

նմանօրինակ առաջագրութիւն մը մարդկային ամբողջին կողմէ: Կեանքը կը ձեւափոխուէր մահուայ շնորհիւ, երկրաւոր կեանքէն իր շարունակութեան շղթան պահելով որով չափով: Այս հաւատալիքը առնչող հնազգիտական պեղումներու դրական վկայութիւնները անժխտելի ապացոյցներ կը հանդիսանան. — Ուր և Գիշ քաղաքներու արքայական դամբաններէն՝ արտաշիւմուած են թագաւորական կառքեր, կահ կարասիք, զգեստեղէն, կարասներ զարեջուրի, ևն: Վերջին երախտագիտական տուրքը, անհրաժեշտ ազգակ մըն էր կենդանիներու հոգեկան անդորրութիւնը ապահովող: Հակառակ պարագային, ննջեցեալի լքուած հոգին՝ վրիժառու վայրագութեամբ կը տանջէր զանոնք: Մահուան մրուրը կը մրտէր բոլոր մարդ էակները, կենդանական և բուսական անբանականութիւնը, և նոյնիսկ առակօրէն անմահ կարգ մը աստուածներ, առանց վարձատրական հեռանկարի մը՝ բռնիներու հոյիւն:

Բ. — ԵՐԲԱՅԱԿԱՆ

Միջագետեան ճակատագրապաշտ ըմբռնումը մահուայ, կը հակադրուի Հին Ուստի գրականութեան մէջ, բարոյական մեկնարանութեան գերակշիւ միջամտութեան մը. — մահուայ ներմուծումը մեղքի իրրեւարդութիւն: Յաւերթ սրբութեամբ և անմահութեամբ պատկուած մեր նախահայրերը շնորհազրկուեցան պատուիրադանցութեան թակարդով, Մնն. Գ. 17-19. «Եւ ցԱզամ ասէ, փոխանակ զի լուար ձայնի կնօջք քո, և կերպի ի ծառայ անոր յորմէ պատուիւրեցի քեզ անի միայն չուսի, եւ կերար ի նմանէ, անի՞ծեալ լիցի երկիր ի գործս քո, արտումութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց. փուշ և տատակ բուսուցէ քեզ, և կերիցես զքանջար վայրի: Բրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև զարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր ի հող զարձցիս: Բարոյական խոր ենթահողի մը արժեւորումովը կը գերազանցուի Հին Ուրազան Մատենագրութիւնը երբայական, բարեյական անյատակ և քրմածանային ենթագրութիւններու վրայ մահուայ չուրջ: Իսրայելացիներու հոգեպաշտ հայեցողութեամբ, մահը անսովոր երեւոյթի մը վանդականութեամբը, կը ճնշէր ան-

մահութիւն յանկերգող մարդկային սրտին վրայ: Անդր-շիրիմեան կայանը ոգիներու՝ չըէօլ՝ ԿՆՊՇ՝ կը կոչուէր երբայեցիներու մօտ: Երկրի խոր ընդերքներուն մէջ կը մխրճուէր անոր սահմանները: Ազջամուզը կը նսեմացնէր անոր տարածքը, Յովք, Ժ. 21-23. «Մինչև երթեալ իցեմ՝ ուստի ոչ զառնայցեմ յերկիր խաւարին և մթին, յերկիր աղջամզջին յաւիտեական, ուր ոչ գոյ լոյս և ոչ տեսանելի զկեանս մարդկան: Վերադարձի անակնկալը գեհնէն չօրօքէ թող կենդանի բարեկամի մը կամ կողակցի մը վշտահար սիրտը, Յովք, է. 9-11. «Իբրեւ զամպ շնչեալ յերկնից. զի եթէ իջանիցէ մարդ ի գոթոս. ոչ եւս ելցէ և ոչ զարձցի ի տուն իւր, և ոչ եւս ծանիցէ զնա տեղի իւր: Ապականութեան այս գոտըր սակայն զերծ բարեկական ստորերկրեայ աշխարհի շահամոլ և ունայնամիտ աստուածութիւններու ծածկանարքներու ստորնութենէն, կը վայելէ հայրական հրակողութիւնը տիեզերքի արարչին, Սաղմոս, ձԼԹ. 7-9. «Եթ՝ երթայց ես յովուոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: Թէ ելանեմ յերկնիս՝ զու անդ ես. Թէ իջանեմ ի գոթոս՝ և անդր մօտ ես: Հին Ուստի Աստուածը չի մեռնիր, Սաղմոս, Ղ. 2-3. «Մինչև լերինք հաստաւեալ էին, և մինչև ստեղծեալ էիր զերկիր և զամենայն տիեզերս, յաւիտեանից մինչև յաւիտեանս զու ես: Սաղմ. 26-28. «Ի սկզբանէ. Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործիք ձեռաց քոց երկինք են: Նոքա անցանն, և զու կաս և մնաս յաւիտեան, ամենեքեան օրպէս զձորձս մաշեցին, օրպէս վերաբրկուս փոխեցես զնոսա և փոխեցին: Բայց զու նոյն իսկ ես, և ամբ քո ոչ անցանն:»

Իսրայելեան չըէօլը չի բնութագրեր համայնական ուղիւնի մը ազահութիւնը, այլ մանաւանդ շարութեամբ սեւցած հագիններու տանջարանի մը երկիւղը: Իսկ ընտրանին բարի հոգիներու, պիտի հրճուի երկնքի երանութեան մէջ, Դան., ԺԲ. 2-4. «Եւ բազումք ի ննջեցելոց ի հող երկրի՝ յարիցեն. ոմանք ի կեանս յաւիտեականս, և ոմանք ի նախատինս և յամօթ յաւիտեականս: Եւ իմաստունք ծագեցին իբրեւ զլուսաւորութիւն ի հաստատութեան, և բազումք յարդարոց՝ իբրեւ զաստեղս յա-

ւիտեանս՝ և եւսս։ Մեծիական փրկագործութեան նշանակէտն է բարի հոգիներու յարութիւնը, Յովք, ԺԹ. 25-27. «Քանզի զիտեմ զի մշտնջենաւոր է որ լուսանելոցն է զիս յերկրի, յարուցանել զմօրթ իմ որ կերեաց զայս ամենայն. ի Տեառնէ վճարեցաւ ինձ այսս։ Հին Սրբազան Մատենագրութեան շրջելը, առաւելապէս չար հոգիներու հաւաքաւաճը կը պատկերացնէ։ Մինչ բարի հոգիները ժառանգորդները պիտի հանդիսանան աստուածային երանութեան։ Դիպումով մը անխնայ հարուածին արդիւնքը չէ արդարի մը կեանքին շիջումը իր գարունէն իսկ, այլ աստուածային գութի և սիրոյ անաչառ մէկ երաշխիքը, անմեղը մեղքերու ճահիճէն ձերբազատել ձգտող։

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Իտրայեիան միախառնաբանութիւնը չի կրեր ոչ մէկ կնիք Միջագետեան գիպումաւազաւորութեան։ Հին Ուխտի գրականութիւնը չի զեկաւառուիր ճակատագրի քրմայքովը, որ կոճղը կը կազմէ ասուրաբաբելական կրօնքին։ Այս կրաւորական րմբոնումը զաղափարական զուգահեռական մը կ'երկարի Յոյներու անաղքիւն, Հոսիմայեցիներու ֆաթումին, և արարներու մէջգիծւոյն։ Կոյր նախառնամանումի մը զոհը կը հանդիսանայ բարեւաջիւն կեանքը։ Մեղաւոր թէ արդար, պիտի հիւժի ան լուսազուրկ կայանին մէջ։ Մինչ Հին Սրբազան Մատենագրութիւնը երբայեցիներուն բարոյական յայտնատեսութեան մը աստուածային բնոյթովը կ'արժեւորէ մարդկային անձնաւորութիւնը։ Չարը իր երկնառաք պատուհասովը պիտի տանջուի աղջամղջային ստորերկրեայ զուրին մէջ։ Մինչ արդարը պիտի լուսապսակուի երկնքի մէջ, պիտի յարութիւն առնէ, ջերմօրէն ջատագովումը մարդապետութիւն մը Դանիէլի և Եսայիի մարգարէութիւններուն մէջ, The Gilgamesh Epic and Old Testament Parallels, by Alexander Heidel, Chicago, Illinois, էջ 223։

Իզուր է, որ համաբարեւական զըպրոցը՝ հոգեկան և բարոյական կենսաւորող աւելէ պարպում՝ չոր անդամազննութեան կ'ենթարկէ Սուրբ Դրական հաւատալիքները։ Հին Ուխտի կտակը՝ իր ներշնչումի անզուգական գերակշռութեամբ, բաղդատական եղբ չուրի հեթանոս երկերուն հետ։

ԱՆՈՒՇԱՆԱՆ ԱՐԳ. ԶԳՋԱՆԵԱՆ
(Շարունակիլ՝ 3)

ԵԿԵՂԵՅԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ

“ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱԻԱՏՔԸ”

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմալիկ 1953 Նոյեմբեր-Դեկտեմբերի թիւը կը պարունակէ յօդուած մը վերոգրեալ խորագրով, և ՍՍ. Ներսէս Շնորհալի և Պետրոս Առաքեալ՝ ենթախորագրով. ստորագրուած է Հ. Ներսէս Տէր Ներսէսեանէ, և շարունակելի է։ Այդ յօդուածին մէջ կան մեր գրածներուն վերաբերող կարգ մը անձիւղ կէտեր որոնց չուրջ հարկ կը համարինք արձանագրել մեր նկատողութիւնները։

1. — Էջ 233. — «Ոմանք»։ Դերապատիւ յօդուածագիրը ծանօթագրած է. «Կ'ակնարկէ կաթողիկէ հեղինակներուն»։ — Աւելի ուղիղ պիտի ըլլար ըսել՝ հայ կաթողիկէ գրողներու։

2. — Հասկի մէջ լոյս ահսած մեր յօդուածին եզրակացութիւնը, թէ ՍՍ. Բարթողիմէոս Առաքեալ այնքան իշխանութիւն ստացած է Քրիստոսէ որքան Ս. Պետրոս Առաքեալ, և առաջինին յաջորդները նոյնքան իշխանութիւն ունին որքան երկրորդին յաջորդները», Դեր. յօդուածագրին թուած է «չունդալից», և իր կարծիքով ատիկա «նորելուկ գիւտ մըն է, զոր կարգ մը Սաղէմեան կամ Անթիլիասեան զրիչներ ի զուր կը փորձեն մեր լուսամիտ հայրապետներուն բերանը զնել» (էջ 234)։ — Մեր եզրակացութիւնը նորելուկ գիւտ մը չէ, այլ Մխիթարեան Միաբանութեան հիմնուէն զարբեր առաջ Մխիթար Սկեւռացիէն չեփորում հին ու յայտնի ճշմարտութիւն մը։ Ան իր «Յաղագս Համապատուութեան Երկոտասան Առաքելոց» երկին մէջ այս տեսութիւնը բազմաթիւ աւետարանական վկայութիւններով հաստատելէ յետոյ կ'եղբարկացնէ. «Արդ՝ որովհետեւ այսքան չուրջ զմեզ մածեալ ունիմք զբաղմութիւն վերկայութեանցս, ի բաց ընկեցուք զամբարտաւանութիւն, որ է մայր խոռվութեան,

և զհաւասարութիւն տացուք նոցա՝ ըստ Քրիստոսի»^(*)։

3. — Էջ 234. — Գեր. յօդուածագիրը կը գրէ. «Զգո՛ւշ, սիրելի ընթերցող, մի՛ կարծեր թէ Ս. Ն. Ծնորհալի հայրապետը ինք իրեն հակասած ըլլայ. շատ աւելի հաւանական է որ սխալած ըլլայ նոյն ինքն Ն. Եպս. Ծովական իր մեկնաբանութիւններուն մէջ»։ Արդարեւ չենք կարծեր «թէ Ս. Ն. Ծնորհալի հայրապետը ինք իրեն հակասած ըլլայ»։ Բայց կը կարծենք թէ «շատ աւելի հաւանական է որ սխալած ըլլայ նոյն ինքն»։ 2. Ներսէս Տէր Ներսէսեան, քանի որ ինքն ալ սխալակա՛ն էակ մըն է. վասն զի, ըստ հոռմէական նորեկուկ «վարդապետութեան», մարդոց մէջ մէկ «անսխալական» միայն կայ և այն ալ, եթէ չենք սխալիր, ինքը չէ։ Մեր այս յօդուածով ցոյց կու տանք թէ 2. Ներսէս Տէր Ներսէսեան բազմիցս սխալած է իր մեկնաբանութիւններուն մէջ։

4. — Էջ 235. — Գեր. յօդուածագիրը կ'ըսէ. «... զորս ներկայիս Ն. Եպս. Ծ. ևս կը կրկնէ քանի մը յաւելումներով և Օրմանեանի հինցած յանկերգը նուազելով»։ — Մեր յօդուածին մէջ չկրցանք գտնել «Օրմանեանի հինցած յանկերգը»։ Ընդհանրապէս Գեր. յօդուածագիրը զո՛հ գտցած է ականջի խաբկանքի մը, կարծելով թէ զեռ կը լսէ, ու մանց մղձաւանջը դարձած այդ ձայնը, նոյն իսկ հոն՝ ուր Սրբազան Աւետարանիչներու անհերքելի վկայութիւնները կը հնչեն պարզապէս։

5. — Էջ 235. — Ըստ Գեր. յօդուածագիրին, Ն. Եպս. ի «քով ալ կը պակսի զիտական մեթոտը, ուստի նաև առարկայականութիւնը»։ — Այս վճիռը կարդալէ յետոյ ի հարկէ մեզի կը մնայ դարմանել մեր այդ «պակասութիւնը», ցոյց տալով զիտական մեթոտով, ուստի նաև առարկայօրէն, թէ զիտական և առարկայական ինչպիսի սխալներու մէջ է ինչպէս զժրախտաբար 2. Ներսէս Տէր Ներսէսեան։

6. — Էջ 237. — «... և Ն. Եպս. Ծովականի համար այս տողերը բանաստեղծութիւններ են»։ կ'ըսէ 2. Ն. Տէր Ներսէսեան։ — Գեր. յօդուածագիրը զիտական

մեթոտի համաձայն պէտք էր որ նշանակէր այն էջը ուր տեսած է այդպիսի հաստատում մը Ն. Եպս. Ծովականէն, հակառակ պարագային իր դրածը կ'ըլլայ ոչ թէ «առարկայական» այլ ենթակայական, նոյնիսկ երեւակայական։ Թէ Գեր. յօդուածագիրը իր երեւակայութեան մեծ արժէք կու տայ, կը հաստատուի այդ պարբերութեան վերջին տողերով. «Թէ և Ն. Եպս. Ծ. և իր համախոհները այս բաները յայտնապէս չեն ըսեր, սակայն ա՛յս է իրենց յօդուածներուն եզրակացութիւնը»։ Գեր. յօդուածագիրը իր երեւակայութենէն այնքան նուաճուած է որ քիչ յետոյ նորէն կը կրկնէ իր յանկերգը. «... եթէ Եղեսիոյ Ողբը լոկ բանաստեղծութիւն էր ըստ իրեն ...»։ — «Եթէ»ն բաւական չէ Ծովականէն չգրուածը իրրեւ գրուած ենթադրելու. և այդ խախուտ ենթադրութիւնը հիմ ընելով վրան չէնք կառուցանելու ճիշդ տեղեւորութիւն մը։

7. — Էջ 237. — Գեր. յօդուածագիրը կ'ըսէ. «Այս բոլորին վրայէն լուծեամբ անցեր է Ն. Եպս. Ծովական, և հաստատածը յիշատակելէն վերջ, իրրեւ թէ անոր իմաստը աւելի ուղիղ հասկնալու նպատակով, զիմեր է ուրիշ վկայութիւններու, ...»։ — Դիտական մեթոտի համաձայն չէ շարժած Գեր. յօդուածագիրը. մենք այդպէս չէինք գրած, այլ Ս. Ներսէս Ծնորհալի խնդրոյ առարկայ հաստատած մէջ բերելէ յետոյ աւելցուցած էինք. «Աւելի ուղիղ հասկնալու համար թէ ի՛նչ է Ս. Ներսէս Ծնորհալի հայրապետին տեսութիւնը Ս. Պետրոս Առաքեալի մասին, պէտք է հարցը քննել քիչ մը լայն գետնի վրայ, և լուսաբանել ուրիշ վկայութիւններով ...»։ Մեր գրածին և իր մեզի վերադրել ուզածին միջև հակայական տարբերութիւն մը կայ՝ զիտական միտքով տեսնողին համար։

8. — Էջ 238. — Գեր. յօդուածագիրը կը գրէ. «Եղեսիոյ Ողբին մէջ տեսանք թէ Հոռմի Եկեղեցին հիմնուած էր կեփայեան անասան վէմին վրայ»։ — Գեր. յօդուածագիրը, եթէ քիչ մը աւելի մտադիր ըլլար իր կարդացածին, պիտի տեսնէր որ Եղեսիոյ Ողբին ծանօթ տողերուն մէջ՝

«Եկեղեցիդ անշարժելի,
Ի կեփայեան շինեալ վիմի»,

(*) Տպ. Երեսպղեմ, 1860, էջ 65։

«անշարժելի» ամականը եկեղեցիին է տրուած և ոչ թէ կեփայեան վէմին, ինչպէս Նորին Գերազայածառութիւնը, խորալուծ իր երեւակայութենէն, «մեկնարաններ» է գրելով. «կեփայեան անսասան վէմին վերայ» Գիտական մեթոտ չէ եկեղեցիին «անշարժելի» մակդիրը առնել և «ի յազիկանէն շարժեալ» կեփայեան վէմին տալ:

9. — Էջ 238. — Գեր. յօդուածագիրը կարգ մը սխալ և հակաեւտարանական մեկնարանութիւններէ վերջ — որոնց միառմի հերքումը այս յօդուածին շրջագլծէն շատ պիտի հեռացնէր մեզ — կը գրէ. «Հիմա հարց կ'ուղղենք. ինչո՞ւ Ն. Եպս. Թովմական իր յօդուածին մէջ լուծեմամբ անցեր է նաև այս հատուածին վրայէն» — կը պատասխանենք. քանի որ հայ կաթողիկոսները գլխաւորաբար «Եւ դու Հռոմ...» հատուածը կը շահագործէին թիւր մեկնարանութիւններով, հարկ տեսած էինք այդ հատուածը միայն առնել: Հետեւաբար Գեր. րապատիւ յօդուածագիրը իրաւունք չունի «կարծելու որ Ն. Եպս. Թովմական ևս, իր նախորդներուն նման, տարուած է կանխալ կարծիքներէ»:

10. — Էջ 239. — Գեր. յօդուածագիրը կ'ըսէ. «Այստեղ այլևս բացայայտ կերպով Հռոմի եպիսկոպոսը գլուխ կը դրուի ոչ միայն եպիսկոպոսներուն, այլ՝ բոլոր եպիսկոպոսապետներուն»: Իր կողմէ ներսէն Շնորհալիին առնուած վկայութիւնը կ'ըսէ սակայն. «... սուրբ և առաջին ամենայն եպիսկոպոսապետաց հայրապետն Հռոմայ...»: Այսինքն՝ բոլոր եպիսկոպոսապետներու մէջ առաջինը՝ Հռոմի սուրբ հայրապետը: Հայոց եպիսկոպոսապետ Շնորհալի ներսէսի այս խօսքին մէջ «գլուխ» բառը չկայ, բայց Գեր. յօդուածագիրը իր «կանխակալ կարծիքներուն» անդիմադրելի ճշնշումին տակ Հռոմի հայրապետը դարձուցեր է «գլուխ... բոլոր եպիսկոպոսապետներուն»: Գիտական մեթոտ չէ՝ աստիճանակիցներու մէջ «առաջին»ը փոխել «գլուխ»ի, և այդ հակաեւտարանական, հոռուական, յերկրածոյ վարկածը վերագրել Հայոց ներսէս Շնորհալի հայրապետին:

Եւ արդ քանի որ Ո. Պետրոս Առաքեալ գլուխ էր բոլոր առաքեալներու, հետեւաբար անոր յաջորդներն ալ գլուխ չեն

բոլոր եպիսկոպոսներու, այլ միայն և միայն հռոմէական եպիսկոպոսներուն: Գեր. յօդուածագիրն ներկայացուցածը Շնորհալի ներսէսի «հարազատ դաւանանք» չէ, այլ Տէր ներսէսեան Հ. ներսէսի, և այս երկուքին մէջ շատ խոշոր տարբերութիւն կայ, զոր «կանխակալ կարծիքներէ» ազատ՝ յստակ միտքերը միայն կրնան տեսնել:

Մեր այս ճշգուտէն յետոյ աւելորդ կը դառնայ Գեր. յօդուածագիրն սա հարցումը թէ, «ինչո՞ւ Ն. Եպս. Թ. իր յօդուածին մէջ անտեսած էր նաև այս հատուածը» — Այս առթիւ պարտինք յայտնել թէ ուրիշ շատ հատուածներ ալ անտեսած ենք, կամովին ենթադրելով թէ այդ հատուածները չէին կրնար սխալ հասկցուիլ կաթողիկոսացած հայերու կողմէ, բայց երբ կը տեսնենք որ առարկայօրէն գոյութիւն ունի սխալ հասկցող մը, այդ պարագային ստիպուած կը քննարկենք հատուածը, տալու համար անոր լուսարանութիւնը զիտական մեթոտով:

11. — Էջ 241-2. — Գեր. յօդուածագիրը կ'ըսէ. «Հասկ ածաթեթիւն մէջ վերջերս կարգայինք թէ «վստահելի չեն և վերապահութեամբ պէտք է կարգաւ միշտ Մխիթարեանց հրատարակութիւնները, ո՛չ միայն վատիկանի սանսիւրին ենթարկուած, այլ և՛ իրենց հռովմէամէտ սրբազրութիւններուն (1) և նոյնիսկ կէտադրութեան պատճառաւ»։ Հիմա ալ նոյն բանը գրեթէ նոյն բառերով կը կրկնէ Ն. Եպս. Թովմականը: — Մենք գրած էինք Հասկի մէջ. «Վենետիկի պատուարժան հրատարակիչները մէկ բուրժի տեղափոխութեամբ Նաբեկի Սուրբ փորձած են առաջնորդել դէպի Հռովմի Աթոռը, առանց անդրադառնալու որ այդ բուրժի անտեղի տեղափոխութեամբ կը բթմանար խօսքին ընթացքը»։ — Այս կրկին մէջբերումները ըրինք, ցոյց տալու համար որ մեր գրածը ո՛չ նոյն բառերով է ո՛չ ալ նոյն բանն է. «գրեթէ» ուղ մը կացութիւնը չի փրկուիլ: Գեր. յօդուածագիրը բացայայտ սխալ մը ընդունելու տեղ կը փորձէ ապաստանիլ «գրեթէ»ի ետին, կարծելով որ կրնայ պարտկուիլ անոր ստուերին մէջ: Այնտեղ բաները նման կամ նոյն որակել, միտքերու մէջ շփոթութիւն ստեղծելու նպատակով, զիտական մեթոտ չէ, այլ՝ ճիգուրթական:

ԸՆԿԵՐԱՅԻՆ

ԾԵՐ ԸԼԼԱԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

Ծերանալու արուեստը, տարիքի յառաջացումով երևան եկող դժուարություններից դեմ պայքարելուն մէջ կը կայանայ: Փոխանակ դժուարություններէն նուաճուելու, հարկ է նուաճել զանոնք և երջանկանալ: Բայց կարելի՞ է այսպէս ընել, երբ դժուարությունները կը յարձակին մարմինն վրայ ու մեր ուժերը կը լքեն, կը դաւեն մեզ: Ծերանալը բնական փոփոխություն մըն է, չէ կարելի անկէ խուսափիլ: Ծերանալ չու-

զող մարդոց մասին աղուոր պատմուածք մը կարելի է գրել և այսպէս խորագիր մը ընտրել. «Ծառը որ կ'ուզէր պանել իր տերէնները»: Ծառը կ'ուզէ՝ պահել իր տերէնները, բայց աշնան հովերը կ'ախքի մը կը վերածեն զայն, միւս բոլոր ծառերուն պէս:

Այսուամենայնիւ, քաղաքակրթութիւնն ու փորձառութիւնը մարդոց հնարամտութիւններ սորվեցուցած են, պայքարիլ սորվեցուցած են, եթէ ոչ ուղղակի ձերանալուն դէմ, գոնէ ձերութեան տրտում երեւոյթին դէմ: Այս պայքարին մէջ արդու զարգը գլխաւոր դերը կը խաղայ: Տարէց կիներ յաճախ, աւելի ուշադրութիւն կ'ընծայեն իրենց հագուածքին, զարդարանքին քան՝ երիտասարդներ: Բնական է որ այսպէս ըլլայ: Դահարեղեններ մարմինն վրայ ուշադրութիւն գրաւելով ֆիզիքական թերութիւնները կ'անտեսուին: Մատանիներու և ապրանքանքներու փայլը ձեռքերու և դաստակներու կնճիռները որոշ չափով մը կը պահէ. հին ժամանակ, նախնական ընկերութիւններու մէջ սակեղէններու և գոհարեղէններու տեղ՝ մարդիկ կը կիտէին իրենց գէմքերն ու ձեռքերը:

Որեւէ ճիգ, որքան ալ որ վարպետութեամբ ըլլայ, երբ կը փորձէ յառաջացեալ տարիք մը ծածկել, քաղաքակրթութեան արարք մը կը նկատուի: Այսպէս՝ հնարուած են կեղծամները. բրնձափոշիի և ներկի (rouge) գործածութիւնը՝ կանանց գրաւութեան պատրանքը տալու համար: Նորաձեւութեան խանութները, նոր հագուստները և զարդեղէններ տարէց կիներուն տակաւին յուսալու յոյսը կուտան: Որոշ տարիքէ մը ետք, հագուելու արուեստը մէկու մը մարմնական թերութիւնները ծածկելուն մէջ կը կայանայ: Քողը հրաշալի զիւտ մըն է անոր տակ պահուած գէմքը շփոթելու և գեղեցիկին խաբկանքը տալու համար: Բոլոր զարդարանքները քողեր են, որոնք ժամանակի մաշումը վարպետութեամբ կը ծածկեն:

Գիտութիւնը պիտի կարենա՞յ արգելք ըլլալ ձերանալու տրտում ընթացքին որ մեր մարմինները կը փճացնէ: Գիտութիւնը պիտի կարենա՞յ յարանորոգ երիտասարդութեան ակնադրելը ցոյց տալ որուն ջուրերուն մէջ կարենայինք երիտասարդանալ: Շատ անգամ ըսուած է թէ մարդկային

12. — Էջ 242. — Գեր. յողուածագիրը կը գրէ. «Ծանր է Միխայիլաններու համար . . . լսել նման անհիմն զրպարտութիւններ ու նախատինքներ»: — Այդ պարագային կրկնապատիկ մեղադրելի է Հ. Ներսէս Տէր Ներսէսեան, որ ձրի ընդհանրացումով մը Ծովականն ալ կը ֆանայ աւելցնել «զրպարտողներու և նախատողներու» խուսիքն վրայ. մինչդեռ մենք ո՛չ զրպարտած ենք և ո՛չ ալ նախատած, այլ պարզապէս կարեւոր սխալ մը մատնանշած ենք առարկայօրէն, որպէսզի «գիտական մեթոտի» նախանձախնդիր անձեր ուղղեն զայն իրենց յաջորդ հրատարակութեան մէջ:

Ի վերջոյ պարտինք յայտնել որ այս տողերը գրուած չեն մեր կողմէ «հակառակութեամբ և անօգուտ բանակոտութեամբ . . . յորոց ոչինչ օգտեցաւ եկեղեցի յայսքան ժամանակ», ինչպէս կ'ըսէ անմահ Շնորհալին (*), այլ՝ որպէսզի իրենց մայրենի հարազատ Եկեղեցիէն դժբախտ պարագաներու բերումով և զանազան պատճառներով բաժնուած մեր հայ կաթողիկ արեւակեցիները տեսնեն իրենց սխալները, ուղղեն զանոնք, և երջանիկ օր մը վերադառնան գիրկը իրենց հարազատ մօր, ի վիճակ Սրբազան Առաքելոյն Թաղէօսի, և ըլլան «մի հօտ և մի հովիտ»:

Ն. ԵՊՄ. ԾՈՎԱԿԱՆ

(*) Ընդհանրական, Երասաղէմ, էջ 118:

էակի մը տարիքը ոչ թէ իր ծննդեան վկայագրէն կը յայտնուի, այլ իր ներքին գործարաններու կանոնադրութենէն: Այս հասկացողութեամբ յիսուն տարեկան մարդ մը կրնայ աւելի ծեր ըլլալ քան եօթանասունը մէկը: ապա ուրեմն կարելի է ըսել թէ մարդ կ'երիտասարդանայ երբ կենսաբանօրէն անոր մարմինն բաղկացուցիչ բջիջները նորոգուին: Կենսաբաններ կրցած են իրագործել այս՝ աւելի ստորին աստիճաններու վրայ կեցող կենդանիներու պարագային: Կարգ մը թուլամորթ կենդանիներ, ազիջուրին մէջ ինքզինքնին կը թուեաւորեն իրենց գեղձերուն արտահոսման պատճառաւ, զիրենք կանխահասօրէն ծերացնելով: Եթէ ազիջուրը ամէն օր փոխուի, ծերանալու ընթացքը կ'ուշանայ: Կը կարծուի թէ մեր մարմինն զանազան բջիջներուն մաշումը արգիւնք է մեր մարմնէն արտաքուսելիք նիւթերու կուտակումին:

Գիտնականներ փորձած են կենդանիները երիտասարդացնել անոնց ներքին գործարաններուն մէջ գեղձերէն արտահոսած հիւթեր ներարկելով: Մուկերը, օրինակի համար, կը վերագտնեն իրենց կենսունակութիւնը, գրաւութիւնը և սեռային գործունէութիւնը ժամանակի մը համար, երբ զիտական այս գործողութիւնը կրկնուի իրենց մարմինն վրայ: Բայց անհրաժեշտ է այսպիսի գործողութիւններ կատարել մարդոց վրայ: Երբ առողջ ապրինք, կրնանք մինչև եօթանասուն, ութսուն տարիներու կեանք ունենալ: պէտքը ունի՞նք աւելի:

Ութսուն տարեկանին մարդ մը փորձառութիւնը կ'ունենայ ամէն բանի. սէր և ասոր առինքնող զգացումները, փառասիրութիւն և ասոր ունայնութիւնները, անհիմն հաւատալիքներ: Մահուան յառաջացնելիք վախը մեծ է, գիտենք որ այն հետաքրքրութիւնները զորս մենք ունինք այսօր, ունէին նաև այն մարդեր որոնք այժմ մեռած են: Թատրոնի մը մէջ երբ ներկայացումը անընդմէջ կը շարունակուի, ներկայ եղող մը, իր տեղը կը պահէ այնքան ատեն որ փափաքի, բայց երբ նոյն տեսարանները քանի մը անգամ կրկնուին, անմիջապէս կը մեկնի թատրոնէն: Կեանքը շարունակական թատերադրութիւն մըն է. նոյն դէպքերը տեղի կ'ունենան կեանքի մեծ բնմիջ վրայ, և երբ մէկը երկար ժա-

մանակի համար ականատես ըլլայ հոն խաղացող տղեղ կամ նոյնիսկ գեղեցիկ երեւոյթներուն կը ձանձրանայ, վասնզի տաղաւայացուցիչ է: Մէկը միւսին ետեւէն հարկ է որ ներկաները մեկնին . . .

Երբ մեր մտաւորականներէն մէկուն ծննդեան եօթանասնամեակին առթիւ պատուասեղան մը տրուեցաւ, յորեւեարը խօսք առնելով ըսաւ թէ այս առիթը իրեն կը յիշեցնէ իր մանկութիւնը, երբ մայրը իրեն կ'ըսէր. — «Զաւակ քունի ժամանակդ եկած է»: Մանուկները չեն ուզեր անկողին երթալ երբ զիշերը սկսի յառաջանալ, բայց կը զգան թէ ժամանակն է քանի որ ամբողջ օրուն մը խաղէն ետք յոգնած ալ են: «Մահը՝ մայր մըն է կաթնովն և խիստ միանգամայն, որ երբ ժամանակը գայ կ'ըսէ մեզի — զաւակ քունի ժամանակդ է: Անշուշտ մենք կը բողբոքենք մի քիչ, բայց գիտենք և կը զգանք որ հանգչելու ժամանակը եկած է մեր խոնջ մարմիններուն համար»:

Եթէ անգամ մը մտածենք թէ դատապարտուած ենք սահմանաւոր կեանք մը ապրիլ, առնուազն պիտի փափաքինք մեր կեանքի վախճանին հասնիլ, առողջ հոգեով և մարմնով, ինչ որ կարելիութեան սահմանին մէջ է:

Ո՞վ ըսաւ որ ծերութեան անհրաժեշտաբար պիտի ընկերանան այն բազմերանգ տկարութիւնները որոնցմէ մեր երիտասարդութեան կը խորշինք: Շատ մը կենդանիներ կը մեռնին առանց ֆիզիքական հիմնական փոփոխութիւններու: Լաւ մարդուած մարմին մը մինչև խոր ծերութիւն ու շնորհը: Ենթահալի միայն զաղտնիքը կանոնաւորաբար մարդանք ընելը չանտեսելն է: Ինչ որ ըրած ենք անցեալին մէջ կրնանք ընել այսօր և վաղը, բայց ինչ որ չենք ընել այսօր, կրնանք այլևս բնաւ չընել: Նշանակելի կէտը այս բոլորին մէջ այն է որ երբ սկսած ենք ծերանալ չենք կրնար առաջը առնել: Լաւ է երկար ժամանակ ծեր մնալ քան թէ ժամանակէն առաջ ծերանալ:

Պէտք է ժամանակէն առաջ հրաժարինք հոգեկան և իմացական հաճոյքներէն: Հոգին, ինչպէս մարմինը մարդուելու պէտք ունին: Ինչո՞ւ տարեց մարդիկ հրաժարին

այն բոլոր հաճոյքներէն որոնցմով տակաւին կրնան հաճոյանալ: Օրինակի համար ոչինչ կայ ծիծաղելի երկու սիրահար ծերունիներու սիրոյն շուրջ: Անոնք ծիծաղելի կ'ըլլան այն ատեն երբ մոռնան թէ ծերունի են իրենք: Անոնցմէ խրաքանչիւրը, նոյնիսկ ծերութեան ատեն միւսին մէջ կրնայ գտնել այն առաւելութիւններն ու գեղեցկութիւնները որոնց համար հիացում ունէր երիտասարդութեան: Կարեկցութիւն, սէր և հիացում տարիք չունին: Յաճախ կը պատահի որ երիտասարդութեան խենթ տարիներէն վերջ սէրը աւելի լուրջ և պատկառելի երևոյթ մը առնէ: Չգացական թիւրմտացութիւններ տեղի կուտան իմացական խոհուն կեանքի մը և երևան կուգայ հաճելի շրջան մը և մթնոլորտ մը որուն մէջ շնչել հաճոյք է և երջանկութիւն: Այսպէս երկու բարեկամներու կեանքը կը նմանի գետի մը ընթացքին որ սկզբնական շրջանին ուժգին սահանքներ ունի, ջրվիժային վազքով կը հոսի ժայռերու վրայէն, բայց որուն ջուրերը աւելի խելօք և հանդարտ կը հոսին քանի մօտենան իրենց վախճանին — ծովուն կամ օվկէանին: Հմայիչ պատկեր մը արդարեւ երբ հանդարտիկ գետին մէջ կը ցոլան եղբերքի կաղամախներն ու գիշերը՝ աստղերը: Յուզիչ պատմութիւններ կան ծերունիներու կեանքէն: Կը պատմուի երկու ամուսիններու մօտին, մին կոյր և միւսը անդամաւոր՝ կոյր կինը որ չէր կրնար տեսնել կը փնտռէր իր ամուսնոյն ձեռքը թօթուելու համար, ձեռք մը որ այլևս չէր զգար...

Բաց աստի, ծերունիներու կեանքին երջանկագոյն պահերը իրենց զաւակներուն և թոռներուն հետ յարաբերութիւններէն կուգան: Ծնողները կ'ուրախանան զաւակներուն ուրախութիւններով և կը տրամին անոնց տրամութիւններով: Մեր մանկութեան որքան ուրախացած ենք երբ մեր ծնողքը առաջին անգամ ըլլալով մեզ կենդանաբանական պարտէզ մը տարած են: Նոյն ուրախութիւնը կը զգանք երբ մեր կարգին մենք ալ մեր յաջորդները կ'առաջնորդենք այն բոլոր հաճոյքներուն որոնք ժամանակին մերը եղած են:

Կ'ըսուի թէ Փրանսացի նշանաւոր բանաստեղծ և գրագէտ Վիքթօր Հիւկօ իր կենդանութեան խոժոռ մարդ ըլլալով,

գինք նկարողները միշտ յուսահատեցուցած է. ոչ ոք կրցած է յաջող նկար մը պատրաստել: Տաղանդաւոր նկարիչ մը, օր մը, նկարչական մեքենան գետեղելով Վիքթօր Հիւկօյի առջև քոյկտի դռնէ մը ներս վազցնել կուտայ անոր թոռները որոնց ի տես գեղեցիկ ժպիտ մը կը գծագրուի իր դէմքին շուրջ. — միակ ժպտուն պատկերը Վիքթօր Հիւկօյին զօր երբեքից պատրաստուած ըլլայ:

Մեծ հայրերն ու մեծ մայրերը աւելի համերաշխ և համամիտ կ'ըլլան իրենց թոռներուն քան թէ զաւակներուն հետ. ծերունիները կեանքին մէջ գործօն դեր մը ստանձնելէ աւելի իրենց ուրախութիւնը կը գտնեն թոռնիկներու քով, վասնզի նուազ պատասխանատուութիւն կը զգան այլևս: Մեծ հայրերը կը դրօսուն և պատմութիւններ կը պատմեն. չեն կրնար իրենց զաւակներուն հետ վազել, բայց թոռներուն հետ ձեռք ձեռքի կը քայլեն: Մեր առաջին և վերջին քայլերը նոյն իրիմը ունին:

Ճիշդ չէ ըսել թէ տարեց մարդիկ անհրաժեշտաբար առանձնակեաց են. եթէ անձնիշխան ծերունի մը նկարագրով իր շուրջիները իրեն ենթարկող է, եթէ ծերութեան թերութիւններուն դէմ կը պայքարի, և եթէ համեստ և սիրալիր բնութիւն մը ունի, խանդավառութիւն կը ստեղծէ իր շուրջը ու երիտասարդներ կը փնտռեն իր բարեկամութիւնը օգտուելու համար իր փորձառութենէն: Շուտ չենք ծերանար եթէ չծերանալու և ապրելու համար վաւերական պատճառներ ունինք: Տառապանից գոյացութիւն մը, բուռն յուզումներ, պայքարներ, անտեղի սրտմաշուքներ, անշահ պրպտումներ մեզ կանխահասօրէն կը ծերացնեն: Մեր պատմութեան վերջին շրջանին ծանօթ երկու օտար անձնաւորութիւններ Գլէմանսօ և Կլաուսթօն, երկուքն ալ ութսուն տարու՝ նախագահներ էին և ունէին զարմանալի կենսունակութիւն: Գլէմանսօն կուտային մը կը նմանի ծերանալը, զորս գործունեայ մարդիկ ժամանակ չեն ունենար անոր տրամադրելու:

Բայց կարելի է միշտ զբաղուած մնալ. մարդ քանի տարիքը առնէ, այնքան գործելը կը զժուարանայ: Ապա ուրեմն ճիշդ է պատասխանատու պաշտօններ յանձնել ծերերուն: Շատ մը պարագաներու ծերու-

ներենքը աւելի լաւ առաջնորդներ են քան երիտասարդները: Հոգով ազատագրուեցաւ ծերունի Թապիւսի կողմէ: Ակամեմոն նետաորի պէս տասը անձեր կ'ուզէր որպէսզի Տրոփագա պարտուէր: Հին քաղաքագէտներ և բժիշկներ մեծապէս փորձառու են և իմաստուն, հեռու ըլլալով երիտասարդութեան խենթութիւններէն, պաղարիւնութեամբ կը դատեն և հանդարտօրէն որոշումներ կուտան: «Մեծագործութիւնները ֆիզիքական ուժէ աւելի մտածուիմով, հեղինակութեամբ և համբերութեամբ կ'իրագործուին» ըսած է կիկերոն, «առաքինութիւններ» որոնցմով զարդարուած կ'ըլլան ծերունիները»:

Կարելի է երկարօրէն խօսիլ ծերունիներու հանգիստին և զբաղումներուն շուրջ. օրինակի համար որքան հաճելի է կարդալ այն գիրքերը որոնք երիտասարդութեան ատեն խանդավառած են մեզ: Մեծ գրողները անմահ ընկերներ են որոնք կը գեղեցկացնեն մեր ետքի տարիները և կը հմայեն մեր երիտասարդական օրերը:

Երաժշտութիւնն ալ տարօրինակ կերպով հաւատարիմ բարեկամ մըն է: Մեզմէ բոլոր անոնք որոնք մարդոց հանդէպ իրենց հաւատքը կորսնցուցած են, կ'ապաւինին երաժշտութեան վերացնող, քաղցրացնող միջավայրութեան: Ժամանակ մը առաջ, երաժշտական ունկնդրութեան մը առթիւ, երբ մտիկ կ'ընէի Պէթօվէնի եօթներորդ Սէմֆօնին, չորջո Նոտա մարդոց բոլորին ալ դէմքերուն վրայ տեսայ այն հրճուածքը զոր միայն երաժշտութիւնը կը պարգէտ: Զայնական ալիքներ կը փշրուէին բոլորիս վրայ, մեղեդիներ կը զգուէին մեզ, բոլորս ալ մեր առօրեայէն կ'ազատագրուէինք հանճարային հեղինակի կախարդանքին ներքեւ:

Ի վերջոյ, սահմանագիծ տարիքը չըրջան մըն է ուրիշ անդին տեսակ մը թախծութիւն և յուսահատութիւն կը տիրէ. այդպէս չէ սակայն իրականութիւնը: Մերութիւնը ոչ քաւարան է ոչ ալ դժոխք մը որուն սահմաններուն վրայ գրուած ըլլայ. — «Ի բաց վանեցէք Ձեր բոլոր յոյսերը, դուք որ կը մտնէք հոս»: Յուսահատելու պատճառները, զորս ծերունիները կը հաւատան թէ կրնան ունենալ, ըսինք թէ զարմանելի են: Մահուան սարսափն ալ կարելի է յաղթահարել եթէ հաւատք ու-

նենանք . . . մանանխի հատիկի մը չափ:

Մահուան վախը զիմագրաւելու երկու կերպեր կան:

Ա) Եպիկուրեան հասկացողութեամբ (որ կը հաւատայ թէ մահը ոչինչ է):

Բ) Քրիստոնէական հասկացողութեամբ (որ կը հաւատայ թէ ան ամէն ինչ է):

Եպիկուր կ'ըսէ թէ պէտք է ինքզինքնիս հաշտեցնենք մահուան դաղափարին հետ, վասնզի լաւն ու յօրին պարզապէս զատուի խնդիրներ են և մահը զատուութեան կորուստն է: Մահուան ոչինչ ըլլալու հասկացողութիւնը մահկանացու մեր կեանքին մեծ հաճոյքներէն մէկը կրնայ սեպուիլ: Այնքան ատեն որ գոյութիւն ունինք, կը նշանակէ թէ չենք մեռած. կը զաղրինք գոյութիւն ունենալէ երբ մեռնինք:

Քրիստոնեայ մարդը չվախնար մահէն, վասնզի մահը կը նկատէ իրբն անցման կէտ մը անգնեական կեանքին համար և կը հաւատայ որ հոն պիտի ապրի լաւագոյն կեանք մը, վեր ըլլալով այս աշխարհի մեղքերէն:

Մեծ մարդիկ կը մեռնին իրենց դործին և իրենց պարտականութեան վրայ. Շօթէն մեռած ատեն երաժշտութիւն ուղեց մտիկ ընել. Նափօլէօն ըսաւ «Մրանսա, բանակ». բժիշկ մը բռնելով իր դաստակը ըսաւ իր բարեկամներուն «բազկերակը զաղրեցաւ զարնելէ». մահուան անկողնին մէջ թուաբանագէտի մը երբ կը հարցուի 144ին քառակուսի արմատը, ցած ձայնով մը կը պատասխանէ 12 և կը մեռնի: Եւ ի վերջոյ Քրիստոս ալ խաչին վրայ ըսաւ «Ամենայն ինչ կատարեալ է» և մեռաւ:

Կեանքի շատ մը մարդերուն մէջ տալալին մարդիկ կան որոնք կը կրկնեն Համլէթի սարսափելի հարցումը, բայց լաւագոյն է օրերու վախճանին կրկնել Առաքեալին խօսքերը. — «Զի այսուհետեւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ: Զբարեօք պատեալով պատեալացեալ, զընթացս կատարեցի, զհաւատոսն պահեցի: Այսուհետեւ կայ մեայ ինձ արդարութեան պատկն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր, ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ սիրեն զյայտնութիւն նորա»:

Ա. Մ.

(ՎԵՐՉ)

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր**

Ս. Էջմիածին, 29 Դեկտեմբեր 1953

Դեր. Տ. Եղիշե Արեւադ. Տերտերեան

Պատր. Տեղապան Ս. Արսուդ

Երուսաղեմ

Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով կ'աղօրենք որ Տէր համայն մարդկութեան եւ բոլոր կառավարութիւններուն պարզեւ սիրոյ եւ խաղաղութեան Ազին, որպէսզի տիրապետէ աշխարհի մէջ միահամուռ գործակցութիւն եւ ժողովուրդները ապրին խաղաղ ու երջանիկ: Կ'աղօրենք նոյնպէս որ Տէր Ձեզ եւ բովանդակ Միաբանութեան խաղաղութիւն եւ երկար կեանք:

ԿԵՐՈՐԴ Զ.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Երուսաղեմ, 31 Դեկտեմբեր 1953

Ն. Ս. Ս. Տ. Տ. Դերոզ Զ.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Մեր որդիական յարգալիւր շնորհաւորութիւնները Ձերդ Ս. Օծութեան, Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով: Կ'աղօրենք որ Բարձրեալը երկար կեանք պարգեւէ Ձեզի, ի բարեաւարտութեան կարենալ պահելու Մայր Աթոռն ու հաւատացեալ հօք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատր. Տեղապան Ս. Երուսաղեմի

Երուսաղեմ, 31 Դեկտեմբեր 1953

Ն. Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեան

Լիպպոն

Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով մեր արտաբերութիւն եւ յարգալիւր շնորհաւորութիւնները կը ներկայացնենք Ձերդ Վսեմութեան եւ կ'աղօրենք որ Տէր յաջող, երկար եւ երջանիկ տարիներ պարգեւէ Ձեզ եւ Ձեր ընտանեաց:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատր. Տեղապան Ս. Երուսաղեմի

Լաւոն, 5 Յունուար 1954

Դեր. Տ. Եղիշե Արեւադ. Տերտերեան

Պատր. Տեղապան Ս. Արսուդ

Երուսաղեմ

Տիար Գալուստ Կիւլպէնկեան հրահանգած է ինձ իր ջերմ շնորհաւորութիւնները յայտնել Ձերդ Սրբազնութեան, Նոր Տաւրոյ եւ Ս. Ծննդեան Ձեր շնորհաւորութիւններուն ու բարեաւարտութեանց համար, զորս կը փոխադարձէ յարգանքով:

ՅԱԿՈԲԵԱՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Շր. 2 Յուն. — Ս. Արքաւոս քաղաքին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխազիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Արք. Գալիկեան: Ս. Թ. Երկսեռ Մանկապարտէզի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

● Կիր. 3 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Բ. Գողգոթայի վերնամաստրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման: Ս. Թ. Երկսեռ Նախակրթարանի աշակերտութիւնը, ինչպէս նաեւ օտար վարժարաններու հայ ուսանողներ, ստացան Ս. Հաղորդութիւն:

● Բշ. 4 Յուն. — Նոր Տարին եւ Ս. Ծննդը կանխող Աւագ Տօները քաղաքի Նշանակութիւն ունին Հայ Երուսաղէմի համար, այն պատճառով որ այդ շրջանին կը զուգակրէին տօները զոյգ Յակոբոսներուն, որոնց անունով կոչուած է Երուսաղէմի Հայոց Մայրաթանքը, եւ ուր աւանդաբար ցոյց կը տրուին զոյգ Սուրբերուն գերեզմանները: Երեկոյին արդէն, Մայր Տաճարը զգեցած իր հարիւրաւոր արձաթեայ կանթեղներուն ու փալիւն ջահերու հոխ հանգրձանքը պատրաստ էր տօնախմբելու Ս. Երուսաղէմի առաջին Եպիսկոպոսապետին — Տեառնեղբոր — տօնը, երբ ժամը 2.30ին, Մայրաթանքի մեծ դռները կը յայտնէր բացումը Աւագ Տօներուն, հրախմբելով բովանդակ Միաբանութիւնն ու ժողովուրդը Մայր Տաճար: Երեկոյեան ժամերգութիւնն ու Նախատօնակը ողնորիշ հանդիսաւորութեամբ, կատարուեցան Նախագահութեամբ Պատր. Տեղապան Գեր. Ս. Հօր. Արարողութեանց աւարտելով, Միաբանութիւնը. «Օրհնեցէք զՏէր», Աթոռոյ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

● Գշ. 5 Յուն. — Տօն Ս. Գալի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբոր արդար առաւելոյն (Տօն Առաւելական Ս. Արսուդի Երուսաղեմի): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տա-

հարի Ասագ Խորանին վրայ, ժամարան էր Գեր. Տ. Նորայր Եսայ. Պողարեան որ քարոզեց, նիւթ ունենալով օրուան երկու մեծ Սուրբերը, ներկայացնելով առաջինը իբրեւ զգլխումի և ապաշխարութեան տիպար մը, իսկ երկրորդը հաւատքի մարդ մը և Քրիստոսի նորածնի Նիկիոյցոյ աւանդէն կարկառուն զեմքերէն մին, որ պատկառանք կ'ազդէր նոյնիսկ ոչ - քրիստոնեաներուն: Ապա կատարուեցաւ տարեկան հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտամունքը՝ Ս. Աթոռայ բոլոր հանգուցեալ պատրիարքներու հոգեոցն ի հանդիստ՝ նախագահութեամբ Տեղապահ Սրբազանին:

● Դշ. 6 Յուն. — Ս. Ստեփանոսի նախատանկը մեծփայելուչ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Մայր Տաճարին մէջ: Կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Օրուան բուրվառակիր վարդապետներն էին Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանամեան և Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

● Եշ. 7 Յուն. — Ս. Ստեփանոսի ցախովկային եւ առաջին մարտիային: Ս. Աթոռայ Բարեշնորհ Սարկաւազներն ու Ուրարակիրները, թուով 8, արժանապէս պանծացուցին յիշատակը իրենց մատաղաւորին և բոլորանգի Քրիստոնէական Նիկիոյցոյ առաջին մարտիրոսին: Հանդիսութեան նախագահեց Գեր. Տ. Սուրեն Ս. Եսայ. Քէմհանեան: Պատարագը մատուցուեցաւ Ս. Ստեփանոս մատրան մէջ: Ժամարան էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

— Ս. Պատարագէն ետք, Բար. Սարկաւազներն ու Ուրարակիրները, առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներուն, ներկայացան Գեր. Տեղապահ Ս. Հոր և ստացան իր հայրական օրհնութիւնները, իսկ կէսօրին մասնակցեցան Միար. սեղանին:

— Կ. Վ., պտղասեղան տրուեցաւ Սարկաւազաց զատարանին մէջ, ի պատիւ Սարկաւազներուն և Ուրարակիրներուն: Մտերմիկ միջուրտի մէջ խօսուեցան ճառեր ու փոխանակուեցան սիրալիր արտայայտութիւններ:

— Իրիկունը, ժառ. վարժարանի սեղանատան մէջ ևս ընթերթի սեղան տրուեցաւ ի պատիւ Սարկաւազաց, Ներկայ էր վարժարանին Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանամեան և բոլորանգի ուսուցչական կազմը, եղան ճառախօսութիւններ և ոգեկոչուեցաւ տօնին խորհուրդն ու Ս. Ստեփանոսի յիշատակը:

● Ուր. 8 Յուն. — Երեկոյեան ժամերգութեանէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ վաղուան մեծահանդէս նախատանկը: Արարողութեանց կը հանդիսաւորեւր Գեր. Տ. Նորայր Ս. Եսայ. Պողարեան:

● Եր. 9 Յուն. — Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին Ս. Պետրոսի վերնաբարկ մատրան մէջ: Ժամարան էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

● Կիր. 10 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարան էր Հոգ. Տ. Կիրեղ Արդ. Գարիկեան:

— Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծահանդէս նախատօնը պաշտուեցան Մայր Տաճարին մէջ, Հանդիսաւորն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Նախատօնակէն ետք, Միաբանութիւնը, «Որ էնն յեռութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

● Բշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդւոցն Ռոման, Յակոբայ Դիլաղիր առաքելոյն եւ Յովնանու ասուածարան անհաւանքին: Առաւտեան ժամերգութեանէն ետք, Ս. Գլխաղբի մատրան մէջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Ժամարան էր Գեր. Տ. Սուրեն Ս. Եսայ. Քէմհանեան, որ նաեւ քարոզեց շարժական շքեղազարդ սեղանին առջեւ, բնարան ունենալով Վարէ՛ք բմպել զբաժան զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտի՛լ՝ զոր ես մկրտելոց եմ», (Մարգ. Ժ. 38), իր քարոզի ընթացքին ներկայացնելով Ս. Գլխաղբի իբրեւ հօր պաշտպանը Ս. Աթոռայ: Մենք շատ անգամ չենք գիտեր թէ ինչ կը խընդրենք. աշղկիսի անտեղի խնդրուած քերէնէ մին էր Զեբեդեան որդիներուն, իրենց մօրը առաջագրութեամբ Տիրոջ ներկայացուցած խնդրանքը: Յիշուս չկրցաւ զոհացում առաջ իրենց փափաքին: Բայց անոնք, հաւատարիմ իրենց ա՛յնքան յանդգնօրէն կատարած խօստումին, ցմբուր քամեցին իրենց վիճակուած դառնութեան բաժակը: Ս. Պատարագէն ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ երրորդած մեծահանդէս թափօր, մասնակցութեամբ բոլորանգի Միարանութեան, և նախագահութեամբ Պատարագիչ Գեր. Տ. Սուրեն Սրբազանին, որ ամպոխանի տակ՝ Ս. Խաչափայտի ճանաչալագի մասունքն ի ձեռին, կ'օրհնէր Տաճարը լեցնող հաւատարկաւորներու հոծ բազմութիւնը, թափօրը կանգ առաւ մեծ ատեաւին մէջ, ուր Գեր. Սրբազանին «Պահպանիչ» յովնակուեցաւ շարաթ մը տեղ տարելիքի Սասի Տօներու փառահեղ հանդիսութեանց այս շարքը:

● Դշ. 13 Յուն. — Ըստ սովորութեան, երեկոյեան ժամերգութեանէն ետք, ամբողջ Միարանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, Ամանորի առթիւ շնորհաւորելու Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ բաշխեց ամենուն 1954ի Օրացոյց:

— Իրիկունը, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Սրբազաններու և Հոգ. Հայրերու, Ամանորի առթիւ այցելեց ժառանգ. վարժարան, Զարդարուած օրհին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հաւաքոյթ մը: Ժառանգաւոր Սաներ երգեցին և ներկայացուցին զանաւոր մը եղան ճառախօսութիւններ. հուսկ ապա ժառ. Սաները ստացան իրենց կադանզէքներն ու Տեղապահ Ս. Հոր օրհնութիւնը: Հաւաքոյթը շարունակուեցաւ մինչև ուշ ատեն: Ժառանգաւորները վայելեցին Հոգ. Հայրերուն և իրենց հոգածուներուն ներկայութիւնը, ու սիրազեղ միջոցորտի մը մէջ տօնեցին Նոր Տարին:

● Ել. 14 Յուն. — Կաղանդ: Ամանորը հանգիստաբար պահ տեսնեցաւ Ս. Աթոռոյ մէջ: Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աստղծրանին վրայ: Սրտան ժամաբարն էր, ըստ ընկալեալ սովորութեան. Ս. Աթոռոյ ժամօրհնող՝ Լոգ. Տ. Պարգեկ Վրդ. Վրթանէսեան: Փարոգեց Լոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արրահամեան, բնարան ունենալով Դուկ. ԺԻ. Տ. համարը, «Տէ՛ր, թող զգա յայս ամ և աս»: Ըսաւ թէ այս առակը այլաբանական ձևն է Աստուծոյ և մարդոց միջև եղած յարաբերութեանց. մարդը վեր է ամէն տեսակ բոյսերէն և կենդանիներէն, ուստի ունի աւելի պարտականութիւններ: Ինչպէս հոտաւէտ բոյսերն ու օգտակար կենդանիները, այնպէս ալ պարկեշտ ու առաքինազարդ մարդիկ կը սիրուին: Նոր Տարին խորհրդածութեան պահ մըն է: Մարդ միշտ պէտք է անգրագասնայ իր անցեալին, ֆանալով սրբազրի իր գործած մեղքերն ու չարարքները: Ամանորը յարմարագոյն պահն է այդ ընելու, մեղքի կապանքներէն ձերբազատուած ու մարտէր հոգիով զիմաւորելու համար մօտալուտ Ս. Ինննգեան հրաշալիա տեսնել: Յետ Ս. Պատարագի, Միաբանութիւնը շարականի երգեցողութեամբ և մեծ բազմութեան հետեղութեամբ բարձրացաւ Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր տեղի ունեցաւ առտնին հանդիսութեան բաժին մը: Լոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արրահամեան, ի զիմաց Միաբանութեան, շնորհաւորական խօսքեր ուղղեց Դեր. Տեղապահ Սըրբազանին, մաղթելով նոյնատեան կարողութիւն ու արեւշատութիւն: Ընծայարանի և ժառանգ. Վարժարանի ուսանողութեան ի զիմաց, սրտառուջ ուղերձ մը կարդաց Սիմոն Սրկ. Սիմեան: Նոյնը ըրաւ Ս. Թ. Երկեւո Նախակրթարանէն աշակերտ մը, իսկ Մանկապարտէզէն փոքրիկն Դէրդը Հինգեան ծաղկեփունէիով արտասանեց: Երգուեցաւ նաև «Յրկեցէք զՏէր», Ս. Աթոռոյ շարականը: Հուսկ ապա խօսք առաւ Դեր. Տեղապահ Ս. Հայրը, որ անգրագասնալով անցնող վեց տարիներու տխուր կեանքին, մաղթեց որ մէզն ու մահախուլը ընդմիջտ հեռանան մեր կեանքէն ու Նոր Տարւոյ արշալոյսին ծագի և խաղաղութեան արշալոյսը Ս. Երկրի տակաւին թխտած հորիզոնին վրայ ու Տէրունական ազօթքի միաբնան երգեցողութեանէն ետք տուաւ իր օրհնութիւնը երկրաներուն ու ըստ սովորութեան, ամէնուն բաշխեց երկքովի ընտիր նարինջներ:

● Կիր. 17 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի մատարան մէջ: Ժամաբարն էր Լոգ. Տ. Միւռնոն Վրդ. Կրճիկեան:

● Բչ. 18 Յուն. — Ճրագալոյց Ս. Ինննգեան և Աստուածայայնութեան: Առաւօտեան ժամը 9.30ին, զխաւորութեամբ Դեր. Տեղապահ Ս. Հօր ու առաջնորդութեամբ Ս. Թ. Վարժարանի Սկստաական և Արեւուշային խումբերուն, ինչպէս նաև Հ. Ե. Միութեան և Ե. Հ. Բարեխրակաւն Միութեան Սկստաւորներուն, ամբողջ Միաբանութիւնը Մայրավանքէն հանդիսաւոր գնացքով մեկնեցաւ

Ս. Աստուածածնայ դրան մօտակայքը, ուր թափօրականք տեղաւորուելով տասնեակ մը ինքնաշարժերու մէջ, համբայ ելան դէպի Բեթղեհէմ: Այս տարի ևս, ինչպէս նախորդ շրջաւորներուն, օղբ պայծառ էր ու զեղեցիկ: Համարու կէսին, Յունաց Ս. Թէոդոսի վանքին առջև, թափօրը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի ամենազգի Մուխթարներէն և տեղացի հայերէն, որոնք տասնեակ մը ինքնաշարժերով ստուարացուցին գնացքը: Դիմաւորութեան եկած էր նաև ոստիկաններու ջոկատ մը: Հովուաց Դաշտի Պէյթ-Սահուր գիւղէն անցքին, թափօրը զիմաւորուեցաւ գիւղին կառավարական կազմէն ու քահանաներէն, որոնք Միաբանութիւնը առաջնորդեցին տեղւոյն Բաղաքապետարանը՝ ուր ամէնքը պատուասիրուեցան:

Կէսօրուան մօտ, պատկառելի այս թափօրը մօտք գործեց Բեթղեհէմ քաղաքը, ու Սուրբ Ինննգեան Եկեղեցւոյն հրապարակին մէջ զիմաւորուեցաւ տեղւոյն կառավարական կազմէն ու պատուի կեցած ոստիկաններէն: Ժողովուրդի հոծ բազմութիւն մը լեցուցած էր արդէն հրապարակին շրջակայ բարձունքները: Կը հնչէին Տաճարին հայկական զանգերը, զուարթ ու շունչալից: Տաճարի դաւթին զգեստաւորեալ կը սպասէին Սարկաւազներն ու Դպիրները, Բեթղեհէմի Լոգ. Տեսուչն ու Միաբանութիւնը, որոնք թափօր կազմած ու ռթորհուրդ մեծ շարականի երգեցողութեամբ, առաջնորդեցին Միաբանութիւնը դէպի Ս. Ինննգեան Հայավանքը, ուր Տեղապահ Ս. Հօր օրհնութեամբ փառուեցաւ հանդիսութեան այս առաջին մասը, իսկ զիմաւորութեան եկողները պատուասիրուեցան մեր Տեսարանին մէջ:

— Կ. Վ. Ժամը 2.30ին, Դեր. Տեղապահ Ս. Հայրը, ի գլուխ Միաբանութեան, «Հրաշալիա» թափօրով մօտք գործեց Ս. Ինննգեան Տաճարը ու առաջնորդուեցաւ Ս. Այլը, որուն ուխտի արարողութեանէն ետք Տաճարի հայապատկան մասին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու ճրագալոյցի արարողութիւնը, ու մատուցուեցաւ իրկնադէմի խորհրդաւոր ու յանդուցիչ Ս. Պատարագը: Ժամաբարն էր, Անթիլիասի Միաբաններէն՝ Լոգ. Տ. Սահակ Արդ. Այվազեան: Յետ Ս. Պատարագի, Դեր. Տեղապահ Ս. Հօր նախագահութեամբ, կատարուեցաւ Ս. Ինննգեան նախատեսակը, յորմնհետէ թափօրը անցնելով Տաճարի դաւթին «Թորհուրդ մեծ» երգեցողութեամբ բարձրացաւ մեր վանքը, ուր փառուեցաւ ճրագալոյցի հոգեգրան արարողութեանց այս շարքը, Ս. Ինննգեան Աւետարանի ընթերցումով ու «Փառք ի բարձունսի երգատացութեամբ: Ապա, Միաբանութիւն և Ժողովուրդ բազմեցան Ս. Ինննգեան աւանդական սեղանը:

— Գիշերային ժամը 10ին, Միաբանութիւնը արթնեցած է արդէն ու կէս ժամ ետք, Դեր. Տեղապահ Ս. Հօր զխաւորութեամբ, սկսած գիշերային պաշտամունքը: Տաճարի հայապատկան բաժնին մէջ:

● ԴՆ. 19 Յուն. — ԵՐԱՅԻՄ ՏԵԱՌԻՆ, ՄԵԼՈՅ: Կէս զիշերին, Ս. Եննդեղ աւետող խորհրդաւոր զանգահարութենէ մը ետք, Միաբանութիւն ու ժողովուրդ իշան Ս. Եննդեղան այրը, ուր կատարուած արարողութիւնները մօտ մէկ ժամ ձայնաւորութեան Յորդանանի Ռատիոյ կայանէն խօսիչու աշխարհի կարգացուեցաւ Ս. Եննդեղան Աւետարան ու երգութեան «Փառք ի բարձունս» և այլ Եննդեղան շարականներ, յորմենեակ Գեր. Տեղապահ Ս. Հայրը տուաւ իր քարոզ-պատգամը, ուղղուած ընդհանրապէս հայութեան: Գիշերային այս արարողութենէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վերադարձաւ Երուսաղէմ, իսկ մնացեալ հանդիսութեանց նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան: Մատուցուեցաւ զիշերային Ս. Պատարագը Ս. Եննդեղան այրին մէջ, ժամարարն էր, զարմեալ Անթիլիասի Միաբաններէն, Հոգ. Տ. Ծանէ վրդ. Աննիան: Ապա, Գեր. Տ. Սուրէն Սրբազանի նախագահութեամբ, կատարուեցաւ «Կարգ Ջրօրհնաց», որուն ընթացքին, Անթիլիասէն հիւրարար հոս գտնուող Գեր. Տ. Գնէլ Ծ. վրդ. ձերեկեան խօսեցաւ հոգեշունչ քարոզ մը, «Ես լոյս աշխարհի եկի, զի ամենայն որ հաւատայ յիս, ի խաւարի մի մնացէ՛ք ընտանով (Յով. ԺԲ. 46): Առաւօտեան զէմ, մատուցուեցաւ երրորդ և վերջին, հանդիսաւոր Ս. Պատարագը, ուղղակի Քրիստոսի Ս. Եննդեղան տեղւոյն վրայ: Ժամարարն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը զգեստաւորեալ, շարականներու երգեցողութեամբ բարձրացաւ մեր վանքը, ուր վերնայարկ մատարն մէջ կատարուած Ս. Եննդեղան Աւետարանի ընթերցումով փակուեցաւ 10 ժամ տևող զիշերային այս սրտառու հանդիսութեանց շարքը: Ապա, ամենքը բազմեցան Սուրբ Եննդեղան աւանդական նախահաշի սեղանը:

— Նախահաշին ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի ղլխաւորութեամբ, Միաբանութիւնը, ճիշդ երէկուան կարգով, վերադարձաւ Երուսաղէմ, ուր զարմեալ ղլխաւորութեան եկած էին Սկստատական խումբեր: Ժամը 9ին, Միաբանութիւնը հասաւ Մայրավանք, ու մեծ զանգակի խորհրդաւոր ղողանջին ու ժողովուրդի և ուխտաւորներու հոծ բազմութեան ընդմէջէն բարձրացաւ Պատրիարքարան, ուր Գեր. Տ. Սուրէն Եպս., ի ղլխաց Միաբանութեան, Եննդեղան հրաշափառ տօնին առթիւ, շնորհաւորեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ իրաւաւոր սիրալիր արտայայտութեամբ, «Պահպանելով և Ս. Եննդեղան աւետիսով փակեց տօն փառապանծ տօնակատարութիւնը:

— Երուսաղէմի մէջ, Ս. Եննդեղան ձրաղալոյցի արարողութիւնները կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ, ժամը 1.30ին, Ս. Գերեզմանի ատենին մէջ սկսաւ երեկոյան ժամերգութիւնը, որուն յաջորդեց ձրաղալոյցի արարողութիւնը: Ապա մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, Քրիստոսի լուսաւոյն Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Մաշտոց Արք. Բաբելուսեան: Բազմաթիւ հաւատացեալներ Հա-

զորդութեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Ս. Եննդեղան նախատօնակը, նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի, յորմենեակ Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով ու «Խորհուրդ մեծ» — Ս. Եննդեղան շարականի երգեցողութեամբ, մեր Տեսչարանին մէջ փակուեցաւ այս արարողութիւնը, Ս. Եննդեղան Աւետարանի ընթերցումով ու «Փառք ի բարձունս» երգատուութեամբ:

— Առաւօտեան ժամը 4ին, Մայրավանքի մեծ զանգը եկեղեցի կը հրաւրէր Երուսաղէմ մնացող Միաբանութիւնն ու ժողովուրդը: Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ առաւօտեան հանդիսաւոր ժամերգութիւն, յորմենեակ Աւագ Խորանին վրայ մատուցուեցաւ որուն հանդիսաւոր Ս. Պատարագը: Ժամարարն էր, ըստ ընկալեալ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց Վանուց Տեսուչը՝ Հոգ. Տ. Վարուժան Արք. Գապարեան: Բարոյեց Հոգ. Տ. Հայկասեր վրդ. Պայրամեան: Բազմաթիւ հաւատացեալներ Հաղորդութեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան նախագահեց «Ջրօրհնէք»ի սրտաշարժ արարողութեան:

Ըստ սովորութեան, թէ՛ երէկ և թէ՛ այսօր, Երուսաղէմի մէջ երգեցողութիւնները կատարեցին տեղացի ազգայիններ, զգրապետութեամբ Տեսաբ Դէորդ Յովակիմեանի և Մելքոն Պապիկեանի:

— Կ. Վ., Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ վաղուան նախատօնը, նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի:

● ԴՆ. 20 Յուն. — Յիւստակ մեռելաց: Առաւօտեան ժամերգութենէն ետք, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր, ըստ ընկալեալ սովորութեան, Ս. Աթոռոյ Աւագ Թարգմանը՝ Հոգ. Տ. Հայրիկ վրդ. Ասլանեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեշունչ տօնակատարութեան պաշտօն, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի:

Այսկերպ փակուեցան Աւագ և Ս. Եննդեղան տօնակատարութեանց երկարածիկ այս շարքը:

● Կիր. 24 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Կիրեղ Արեղայ Գաբրիէան:

● ԲՆ. 25 Յուն. — Վաղուան հանդիսաւոր նախատօնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուրէն Արքեպս. ի:

● ԴՆ. 26 Յուն. — Տօն Անուանակոյնքան: Առաւօտեան ժամը 8.30ին, Գեր. Տ. Ռուրէն Ս. Արքեպս. Մանասեանի ղլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին կազմուեցաւ «Հրաշափառ»ի հանդիսաւոր թափօրը: Պատանատեղւոյն և Ս. Գերեզմանի ուխտերէն ետք, Գերեզմանին շուրջանակի թափօրով, մեր Տեսչարանին մէջ փակուե-

ցաւ «Հրաշափառ»-ի այս հանդիսութիւնը: Կարճ զաղարէ մը ետք: որուն ընթացքին կը հնչէին Տաճարին հայկական կոչնակները: Քրիստոսի կենսապարզե Գերեզմանին վրայ մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը: Ժամաբարն էր Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան: Քաւրոցեց Գեր. Տ. Գնէլ Ծ. Վրդ. ձերէնեան, բնաբան ունենալով «Դա է որդի իմ սիրելի», (Ղուկ. Գ. 22): Ըսաւ թէ մարդիկ ամէն ինչ կ'ընեն գնաւ հատանքի արժանանալու համար և սակայն երբ մեր բարի գործերը գնահատանքի չարժանան մարդոց կողմէ: պէտք չէ որ յուսահատութեան մէջ իյնալով կասեցնենք թափը մեր նախկին գործունէութեան: Տիրոջ ձայնը պէտք է որ միշտ խօսի մեզի: Եստեղ այսօր կ'արգիլեն այդ ձայնը մեզի հասնելու: Եթէ մենք կ'աշխատինք ռաբանոր գիւտերով ինքզինքնիս հաղորդակցութեան մէջ զենել աշխարհի մէկ հեռաւոր անկիւնը զըստը մեր սիրելիներուն հետ, որքան ցանկալի պիտի ըլլար որ միջոցներ փնտռէինք մշտական հաղորդակցութեան մէջ մտնելու մեր երկնաւոր Հօրը հետ: Ս. Պատարագէն ետք, «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ ու Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, Տաճարի մեր Տեսչարանին մէջ փակուեցաւ Ութօրէքի այս հանդէսը: Ժամը 11.30ին, Միաբանութիւնն ու ժողովուրդի բազմութիւնը, ինչպէս նաեւ Ս. Թ. Նախակրթարանի աշակերտութիւնը վերադարձան Մայրավանք: Հայոց թաղի մուտքին, Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ յառաջացաւ զէպի Մայրավանք ու բարձրացաւ Պատրիարքարանի լուսադարձուած մեծ դահլիճը, ուր կը սպասէր Գեր. Տեղապահ Սրբազանը, որ զգեստաւորուելով նախապահեց «Տընօրնէք» արարողութեան: Միաբան երգուեցան «Լոյս ի լուսոյ» և «Խորհուրդ մեծ»: Զգեստաւորուեցաւ նմանապէս վանուց ժամօրնոցը: և ըրաւ Ս. Իննդեան Աւետարանի ընթերցումը: Փառք ի բարձունքի և Յիսուսի Մկրտութեան նուիրուած շարականներու երգեցողութենէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը օրնեց Ս. Աթոռոյ բարիքները, յորմնեակ փոքր-թափօր մը: զիսաւորութեամբ ժամօրնոց վարդապետին, մեկնեցաւ վանքին մասանը, փռուոն ու խոհանոցը, ուր ի միջի այլոց օրնուեցաւ նաեւ օրուան յատուկ հերիտայի հայկական հաշը:

● Դշ. 27 Յուն. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Բէմհանեանի:

● Եշ. 28 Յուն. — Տօն ձնճկեմն Ս. Յովնանու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամաբարն էր Գեր. Տ. Գնէլ Ծ. Վրդ. ձերէնեան:

● Կիր. 31 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնաշարի մատուռին մէջ: Ժամաբարն էր Հոգ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Բշ. 4 Յուն. — Առաւօտուն, Յոպպէի Տեսչ. Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ապատեան վանական գործերով ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Դշ. 5 Յունուարի կէսօրէ վերջ:

— Կ. վ., Անթիլիասի Միաբաններէն Հոգ. Տ. Եանէ Վրդ. Անէմեան ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Եշ. 21 Յունուարի Կ. վ.:

— Կ. վ. ժամը 4.30ին, Անգլիոյ ձախակողմեան աշխատաւորականներու պետ Պր. Ա. Պիվան այցելեց Ս. Յարութեան Տաճարը և ընդունուեցաւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներուն կողմէ:

● Դշ. 6 Յուն. — Կ. վ., Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Երջանաւարտից Միութեան երեսօղէմի մասնահիւրին կողմէ, ի պատիւ Միութեան Նախագահ՝ Mr. Emile Bustani (անգամ Լիբանանեան Խորհրդարանին) և Անգլիական Խորհրդարանէն երեք հոգիներ պատուիրակութեան մը տրուած թէյասեղանին ներկայ զըստը եցան Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Անթիլիասէն հիւրաբար քաղաքս գտնուող Հոգ. Տ. Եանէ Վրդ. Անէմեան և Տիար Կարպիս Լինդեան:

● Եշ. 7 Յուն. — Կ. վ., Քաղաքիս Յրանսական Centre Culturel կողմէ սարքուած հաւաքոյթին և R. P. Tournay O. P ի բանախօսութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիրեղ Արդ. Գաբրիէան:

● Ուր. 8 Յուն. — Օրթոտքսներու Սուրբ Իննդեան տօնին առթիւ, առաւօտեան ժամը 10էն սկսեալ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը հանդերձ Միաբանութեամբ, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքարանին, Ղպտոց և Հապէշաց Գեր. Եպիսկոպոսներուն և Ասորոց ու Ռուսաց Հոգ. Տեսուչներուն:

● Դշ. 12 Յուն. — Կ. ա., Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Խաւքէլ և վերադարձաւ նոյն օրը կէսօրէ վերջ:

— Անթիլիասի Միաբաններէն Գեր. Տ. Գնէլ Ծ. Վրդ. ձերէնեան և նորընծայ Հոգ. Տ. Սահակ Արդ. Այվազեան, Ս. Իննդեան տօններուն առթիւ հիւրաբար ժամանեցին Ս. Աթոռ:

● Եշ. 14 Յուն. — Ամանորի առթիւ, Կ. ա. ժամը 10էն սկսեալ, Պատրիարքարան այցելութեան եկան Քաղաքիս Վսեմ. Մութասարէֆը, Ընդհ. Ոստիկանապետը և Քաղաքապետը:

● Ուր. 15 Յուն. — Կ. վ., Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան, որ երկու ամիսներ է վեր Պաղտատ կը գտնուէր և Ս. Աթոռոյս Միաբաններէն Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, որ երեք ամիսներ է վեր արձակուրդով զարձեալ Պաղտատ կը գտնուէր, վերադարձան Ս. Աթոռ:

● Դշ. 20 Յուն. — Մեր Ս. Երանգեան տունին առթիւ, առաւօտեան ժամը 10էն սկսեալ Պատ. րիւրքարանս շնորհաւորական այցելութիւն տըւին, Յունաց Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Աթեւակորաս Արքեպս. իր հետեւորդներով, Ֆրանչիսկեանց Կիւսթոտ Հայր Ճիւսթինիո Ֆալլիօ հանգերձ Միարանութեամբ, Լատինաց Պատրիարք Մոնս. Տ. Ալպէրթօ Կորի իր հետեւորդներով, Ղպտոց, Ասորւոց և Հապէշաց Ընդհ. Տեսուչները հանգերձ Միարանութեամբ, Մեղքիթ Եպս.ը. Հայ և Յոյն-Կաթոլիկ համայնքներու Տեսուչները, Ռուս Միարանութեան Մեծաւորը, Անկլիքան Եպս. Դեր. Տ. Սթէֆանը իր փոխանորդով, Լատերականաց Մեծաւորը, Անգլիական Ընդհ. Հիւպատոսը, Հին Բաղարի Ոստիկանապետը, Կառավարական զանազան մասնաճիւղերու և Արար Լէզէնի հրամանատարութեան ներկայացուցիչներ, Սայիտ փաշա, Արէֆ փաշա և այլ ականաւոր անձնաւորութիւններ:

● Կիր. 24 Յուն. — Կ. Վ., Դեր. Տ. Սուրէն Եպս. Բէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինդիւանի, ներկայ գտնուեցաւ R. P. Congarի կողմէ Բիւզանդական և Լատինական Եկեղեցիներու բաժանման Զրդ զարադարձի (1054 - 1954) առթիւ տրուած բանախօսութեան, Դոմինիկեաններու St. Sauveur վանքին մէջ:

Ս. ԵՐԱՆԳԵԱՆ ՈՒՆԵՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՍՐԱԵԷԼԷՆ

18 Յունուար 1954, Երկուշաբթի առաւօտուն, իտրայէլէն Ս. Աթոռ ժամանեց 226 ազգայիններու ուխտաւորական կարաւանը: Եկած էին մեծ

մասամբ Հայֆայէն և Յոպպէէն, փոքր թիւով ալ Նոր Երուսաղէմէն, Լիւզ-Ռեմէէն, Նաղարէթէն և Աքքայէն: Սահմանադրութիւն վրայ, անոնք զիմաւորուեցան իրենց ազգականներէն ու ժողովուրդի հոծ բաղմութենէ մը: Անոնք բոլորն ալ ներկայ գտնուեցան Ս. Երանգեան սրտառու շարժողութեանց, ոմանք ի Բեթղեհէմ և ոմանք յերուսաղէմ, վայելելով հոգեկան մխիթարութիւն ու անոնցմէ շատեր ստացան Ս. Հաղորդութիւն: 36 ժամեռու արտօնութեամբ միայն եկած ըլլալով, Երեքշաբթի երեկոյեան իսկ անոնք վերադարձան Իսրայէլ: Այս անգամ ալ սահմանադրութեան եկած էր ժողովուրդի խռններամ բաղմութիւն՝ ողջերթ մաղթելու իրենց ազգականներուն ու իսրայէլահայ արեւակիցներուն:

ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐԱՊԵՏ ԽԱԶԵՐԵԱՆ

Յաւով կ'արձանագրենք մահը Ս. Աթոռոյ տարեց Մայրապետներէն Մարիամ Մայրապետ Խաչերեանի, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 21 Յունուարին, յետ երկարատե հիւանդութեան: Հանգուցեալը ծնած է Ատանա, 1881ին: Տաւադրութեան օրերուն անցած է Սալթ, ուր 19 տարիներ մնալէ յետոյ, 1934ին ուխտաւորաբար այցելած է Երուսաղէմ և մտած Ս. Ուխտիս Մայրապետաց շարքին յոյն տարւոյ 15 Մայիսին: Թաղման արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 22 Յունուարի առաւօտուն ու մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատան մէջ: Տէրը թող յաւիտենական հանգիստ պարգեւէ բարեպաշտօնի նշնեցեալին:



تصدرها - بطريقه الامرن الارثوذكس مدير المطبعة - الآب زاوین شنتیان
تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١٩٥٤ يناير

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

Հ ա ռ ու ե կ շ ի ռ Ն պ ա ս տ ի գ

(1952 Յունուար 1 — 31 Դեկտեմբեր 1953)

Այսու կը հրատարակենք Նպաստից Հառուեկեիւր 1952 Յունուար 1-էն 31 Դեկտեմբեր 1953 տարւոյ ի գիտութիւն նուիրատու մերազնեից:

Այս առթիւ պարտք կը զգանք յանուն Ս. Արթուրոյ Միաբանութեան եւ վանքաբնակ մեր ժողովուրդին խորին երախտագիտութիւն յայտնելու մեր բոլոր ազնիւ նուիրատուներուն եւ մանաւանդ Հ. Բ. Ը. Միութեան, մաղթելով բոլորին Ս. Յակոբեանց Արթուրին օրհնութիւնը եւ աղօթելով որ Տէրը մէկի վտարէն հազարապատիկ վարձահատոյց ըլլայ իրենց աս եւ ի հանդերձելումն:

Վարի Հառուեկեիւրէն յայտնի կ'երեսի քէ Ս. Արթուր զրկուած 47.291 Յորդանանեան Տիմարի գումարին շուրջ 30.000ը ծախսուած է մեր կրթական եւ ժողովուրդի պէտքերուն ի հաշիւ: Իսկ մնացեալը Միաբանութեան սնունդի եւ Ս. Տեղեաց պահպանութեան համար:

Մ Ո Ւ Տ Ք

1952

Տ. Յ. ՅԵԼՍ

Յունուար 4. — Պարսկաստանէն	399. —
» 24. — Հ. Բ. Ը. Միութենէն	3179. 472
Փետր. 4-12. — » » » »	3000. —
Մարտ 10. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէն (Միաբանութեան)	150. —
» » » » » (Խնամաստութեան)	997. 125
» 11. — Հ. Բ. Ը. Միութենէն	1000. —
Ապրիլ 23. — Պր. Ե. Թովմեանէն	1. 200
Յունիս 17. — Աբգարեան Գոնէն	997. 500
Յուլիո 7. — Զօմարլուի Հ. Մ. Կ. Վարչութենէն	20. 500
» 16. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէն (Միաբանութեան)	497. 500
» » » » » (Աղբասաց)	500. —
» 24. — Հիւս. Ամերիկայէն	703. 800
Օգոստ. 7. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէն (Միաբանութեան)	248. 750
» » » » » (Աղբասաց)	250. —
» 15. — Հար. Ամերիկայէն	812. —
Սեպտ. 2. — » »	535. —
Հոկտ. 10. — » »	5845. —
» 22. — » »	2080. —
» » Պր. Ե. Պենլեանէ (Ժառ. Սանի մը)	74. 750
Դեկտ. 2. — » » » » » » »	75. —
» 5. — Միջեկ. Օգն. Մարմնէն (Ս. Թրգմ. Վարժ.ին)	300. —
» » Հար. Ամերիկայէն	410. —
» » Հիւս. »	205. —
» 23. — Հար. »	1858. 500
Փոխադրելի	24140. 097

ՍՈՒՏՔ

Տ. Յ. ՖԻԼՍ

1953

	Փոխադրեալ	
Յունուար 2. — Հար. Ամերիկայէն	24140.097	
Փետր. 19. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէն (Միաբանութեան)	408. —	
» » » » » (Ազգաց)	339. —	
» » » » » (Խնամաստութեան)	500. —	
Մարտ 4-9. — Հար. Ամերիկայէն	407.875	
» 9. — Մեղոնեան Նուիրասութեանէն	2006. —	
» » Տիկ. Սիրունէ	2560. —	
» » » Բ. Նուսուֆեանէ	10. —	
» » » Լիպմանէ	40. —	
» » Պր. Ա. Ասասուրեանէ	120. —	
» 16. — Հար. Ամերիկայէն	80. —	
Ապրիլ 10. — » »	2400. —	
Մայիս 18. — Պր. Ա. Իւրիւնեանէ	234.850	
Յուլիս 17. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէ (Միաբանութեան)	387. —	
» » » » » (Ազգաց)	225. —	
» 18. — Հար. Ամերիկայէն	25. —	
» 29. — » »	1131. —	
Օգոստ. 3-4. — Հ. Բ. Ը. Միւրքենէն	1510. —	
Սեպտ. 18. — Սան Փաւլոյի Հայ Բողոք. Համայնէն	7179.487	
Հոկտ. 10. — Հար. Ամերիկայէն	126.100	
» 13. — Տիար Խաչատուր Ստեփանեանէ	1185. —	
» 26. — Հար. Ամերիկայէն	6.942	
» 27. — Տիար Արամ Սիմոնեանէ	531.670	
Նոյեմ. 3. — Տիկին Աղանի Սեպուրեանէ	1.965	
» 7. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէ (Միաբանութեան)	9.575	
» » » » » (Խնամաստութեան)	158.850	
Դեկտ. 7-10. — Հար. Ամերիկայէն	40.650	
» 21. — Ֆիլասելֆիայէն, 10 ազգայիններէ	184.080	
» » Ուստի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Տիկնանց Միւրքենէն	23.100	
» 22. — Տիար Ն. Պենընանէ (Ժառ. Սանի մը)	173.250	
» 25. — Վսեմ. Գ. Կիւլպենկեանէ (Միաբանութեան)	150. —	
» » » » » (Ազգաց)	250. —	
» » » » » (Ս. Արուին)	250. —	
	497.500	
	Դումար	
		47291.991

ԵԼՔ		Տ.Յ. ՖԻԼՈ
Հիւանդաց դեղ եւ դարման		831.715
Նպաստ գանազանաց		570. —
Հաց աղբաց Բերդենեմի		540. —
Ժառնգ. Վարժ. եւ Բնծայարանին		3290. —
Ս. Թրգմ. Վարժարանին		5080. —
Պարենաւորման Յանձնախումբի ծախքեր		11176.665
Միաբանութեան՝ Վսեմ. Գ. Կիւլյենկեանէն	150.700	
	496.500	
	248.750	
	336. —	
	225. —	
	158.850	
	250. —	1865.800
Աղբաց՝ Վսեմ. Գ. Կիւլյենկեանէն	500. —	
	250. —	
	575. —	
	250. —	1575. —
Դեռ. Տ. Սերովքե Վրդ. Ի Հար. Ամերիկա երթուղարձին		777. —
Ս. Յարութեան Տանարի ծախքեր		1788.130
Ս. Յննդեան վանուց ծախքեր		3630. —
Միաբանութեան զգեստի ծախուց		3126.500
Միաբ. եւ Ժառանգաւորաց սնունդին Ի հաշիւ		13041.181
	Գումար	47291.991

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԵՂԱՊԱՆՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՆԷՄԻ

ԶԵԿՈՅՑ Լ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԱԾ

Հանդիմանում եմ զոնուկներին, որ Լ. Բ. Ը. Միութեան վերջին Ընդհանուր Ժողովին յետոյ զուգարում իր նիստին մեջ, Կեդր. Վարչ. Ժողովը Տիար Ալեքս Մանուկեանը իրեն Նախագահ ընտրեց միաձայնությամբ:

Ինչպես ասեցին զեկոյցով մը հաղորդած ենք, Միութեան նախորդ մեծաճանաչ Նախագահը, Տիար Արշակ Գարակեօզեան, այժմ ցկեանա Պատուակալ Նախագահ, եօրր ամիս առաջ պարտաւորուեցաւ իր պաշտօնէն հեռուիլ, առողջական լուրջ պահանջներով:

Ներկայ տարիներէ ի վեր, մեր Միութեան ականաւոր մէկ վարիչը եղած էր ան, իր բազմադիմի կարողութիւններով, իր անսպառ եռանդով, իր նուիրումով եւ իր վայելած ընդհանուր յարգանքով:

Կեդր. Վարչ. Ժողովը, որ Միութեան գործերուն պատասխանատու վերին Մարմինն է եւ լուսաբեղակ է քէ համազգային այս մեծ կազմակերպութեան նախագահի պաշտօնը ուրիշ ման պարտաւորութիւններ ունի, Տիար Գարակեօզեանի յաջորդին ընտրութեան համար չէր փափաքած մասնաւոր անսպառաճ մը ցոյց տալ, եւ զանազան պահանջներով, այս հարցը երկար խորհրդակցութեանց առարկայ բրած էր, ջանալով միակ անձի մը շուրջ կեդրոնացած տեսնել ժողովականներուն միաձայն հաւանութիւնը: Կեդր. Վարչ. Ժողովը պաշտօն նկատած էր, միանգամայն, նախագահի ընտրութիւնը Ընդհ. Ժողովին յետոյ կատարել, այդ զուգարումին մէջ Վարչութեան անդամակցութեան կոչուելիք իր նոր պաշտօնակիցներուն մասնակցութիւնը եւս ունենալու համար Միութեան առաջնորդին անուանումին աւիրով:

Այժմ Կեդր. Վարչութիւնը կը խորհի քէ Լ. Բ. Ը. Միութեան հանդէպ իր պարտականութիւնը կատարեց խոհականութեամբ եւ խղճմտօրէն, Տիար Ալեքս Մանուկեանը նախագահի պաշտօնին կոչելով:

Տիար Մանուկեան, երկարամեայ անդամ Կեդր. Վարչութեան, ամերիկահայ գաղութին եւ Միութեան շրջանակներուն հաջածանօր անձնաւորութիւն մըն է, ո՛չ միայն գործի աշխարհին մէջ իր ունեցած փայլուն դիրքով, այլ եւ մեր ազգային կեանքին եւ Լ. Բ. Ը. Միութեան իր մասնուցած ուշագրաւ ծառայութիւններով, որպէս զանազան ձեռնարկներու վեհանձն աստորդ եւ մեկենաս ու նաեւ որպէս կորովի եւ հաւատարմութեամբ ղեկավար:

Վասն ինչ քէ ան պիտի ընքանայ իր բազմադիմ եւ երախտաւոր նախորդներուն, Պօղոս Նուպարի եւ Արշակ Գարակեօզեանի ուղիքէն, եւ Ազգին բարիքն ու մեր Միութեան ամրութիւնն ու բարգաւաճումը միայն պիտի ունենայ իրեն նպաստակէտ, վայելելով անվերապան գործակցութիւնը Կեդր. Վարչութեան եւ մեր կազմակերպութեան բոլոր Մարմիններուն:

Մեր նորընտրեալ նախագահին կը մաղթենք ամէն յաջողութիւն:

ԴԻՌԱՆ Լ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

(Նիստ ետք, 22 Դեկտեմբեր 1953)



1954-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղեմէն

Պեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան՝

Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան՝

Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան՝

Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան՝

Հոգ. Տ. Մաշտոց Արդ. Բարիլուսեան՝

Հոգ. Տ. Կիւրեղ Արդ. Գարիկեան՝

Հոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան՝

Միաբան Տիր. Ռափայէլ Ըննաղեան

Տիար Եակոբ Արսէնեան՝

Տիար Նորայր Արսէնեան՝

Տիար Եակոբ Թազուրեան՝

Տիար Մուրատ Մանուկեան՝

Տիար Կարապետ Անդրէասեան՝

Տիար Մովսէս Ճանոյեան՝

Անթիլիասէն

Հոգ. Տ. Գարեգին Արդ. Սարգիսեան՝

Պէյրուսէն

Տիար Կարապետ Քաջախեան՝

Լաւնաֆայէն

Արժ. Տ. Վարդան Քհնյ. Աւագեան՝

Փարիզէն

Պեր. Տ. Սերոփէ Ծ. Վրդ. Մանուկեան՝

Ամերիկայէն

Պեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան՝

Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան
(Լոս Անճելըս)

Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան՝

Օր. Խանըմ Սարգիսեան (Ֆրէզնո)

Տիար Հաբուտ Աղամեանին (Տօրքէսթըր)՝

Պողարեան Դրատան (Հալէպ)՝

Տիար Հայկ Օհաննէսեանին (Գահիրէ)՝

Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէյրութ)՝

Տիկ. Նուարդ Կրճիկեանին (Պոլիս)՝

Տիար Սարգիս Եէնիզօմէեանին (Անթիլիաս)՝

Արժ. Տ. Գ. Քհնյ. Գերմանիկեանին (Հալէպ)՝

Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրզի)՝

Տիար Մեսրոպ Պաճաքեանին (Նիւ Եորք)՝

Տիար Միսիթար Գաբրիկեանին (Նիւ Եորք)՝

Տիար Նազար Նազարեանին (Քէհրան)՝

Տիար Մարգար Հէքիմպաշեանին (Պոլիս)՝

Տիր. Նուպար Շապհեանին (Պոլիս)՝

Արժ. Տ. Արսէն Քհնյ. Վարժապետեանին

(Ռումանիա)՝

Արժ. Տ. Վարդան Քհնյ. Ասատուրեանին

(Ատին Ապապա)՝

Տիար Ն. Առաքելեանին (Աղեքսանդրիա)՝

Տիար Միհրան Գալպիեանին (Լոնտոն)՝

Տիար Գ. Քաջաղնին (Գանատա)՝

Տիար Եակոբ Ճանոյեանին (Տիթրոյթ)՝

Արժ. Տ. Մովսէս Քհնյ. Շրէքեանին (Քէսապ)՝

Տիար Եակոբ Քաջախեանին (Նիւ Եորք)՝

Տիար Տիգրան Պաղաւեանին (Նիւ Եորք)՝

Տիար Մ. Յովհաննէսեանին (Մօնթէվիտէօ)՝

Տիար Ա. Սարգիսեանին (Ֆրէզնո)՝

Տիար Գէորգ Ներսոյեանին (Հալէպ)՝

Տիար Վահան Ալթունեանին (Բասառէնա,
(Գալիֆօրնիա)՝

Տիար Անդրանիկ Մանուկեանին (Պաղատա)՝

Ֆրէզնոյի Հանրային Մատենադարանին՝

Ֆրէզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Մա-
տենադարանին՝

Տիար Մ. Գաբրիէլեանին (Սան Ֆրանչիսկօ)՝

Նկատի ունենալով բուդյի եւ կարգ մը ուրիշ
սպարանական պիտոյքներու սղութիւնը, ՄԻՈՆԻ յար-
գելի բաժանորդներուն կը յայտնենք թէ, ներկայ
1954 տարեգրանէն սկսեալ ՄԻՈՆ ամսագրի բաժնե-
զինը բարձրացուած է **15** շիլլինգէն **1** Սթերլինգի:

Բաժանորդագրութիւնը՝ կանխիկ:

Վ.ԱՐՁՈՒԹԻՒՆ «ՍԻՈՆ»Ի

«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂՔՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՖԻԿ ԴԻԻԱՆ: Տիրայր Արք. (նւրտ.): 1952: [Նուէր Վենետիկի Մխիթարեաններէն:
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ: Հ. Վահան Յովհաննէսեան: Ա. Բ. եւ Գ. հատորներ: 1951-52:
ԴԵՂՈՒՆԻ 1947: Նուիրուած «Բազմալէպի 100 ամակին» } Նուէր Վենետիկի
» 1950: » Մխիթար Աբրահոյ մահուան: } Մխիթարեաններէն:
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐԾՆ - ՍԻՐՏԸ: Փրօֆ. Յովհաննէս Պուճիրեան: Նուէր
հրատարակիչ Յակոբ Պուճիրեանէ (2 օրինակ): Անթիլիաս, 1953:
ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ: Նուէր եղուարդ Պողոտեանէ: Պէյրութ, 1952:
ԾԱՂԿԱՔԱՂ ԾԱՐԱԿԱՆՈՅ, ԵՐԳՈՅ ԵՒ ԱՂԹԻՑ, հանդերձ աշխարհաբար թարգմա-
նութեամբ: Հրատ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Նուէր Հայց. Եկեղեցւոյ Կի-
րակնօրեայ Դպրոցներէն: Անթիլիաս, 1952:
ՀԱՐԻՒՐ ԺԱՄ ԱՅՆԹԱՊԻ ՄԷՋ: Երուանդ Քիւլիքեան: Նուէր Քրիստ. Զանից Ընկ.էն:
Պէյրութ, 1953:
1500ԱՄԵԱԿ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ: Աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ:
Նուէր Հրատարակիչ Մարմնի կողմէ: Նիւ Եորք, 1952:
ԿԵԱՆՔԻ ՄԷՋԷՆ (Պատմութիւններ): Սօնա Ա. Տէր Մարգարեան (նուիրատու): 1950:
ՆԵՂՈՒՅՆԵՐԸ (Վոսպօր եւ Տարտանէ): Վ. Նաւասարդեան (նւրտ.): Գահիրէ, 1947:
ԽԹԱՆԻ ԴԷՄ ԱՔԱՑԻ: Յովհ. Գ. Պապէսեան: Լոս Անճէլըս, 1950: (2 օրինակ):
ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ: Տօրթ. Համազասպ Վ. Ոսկեան: Նուէր Տարօն -
Տուրուբրանի Հայրենակցական Միութենէն (2 օրինակ): Վիեննա, 1953:
ՏԱԳՐԸ (Վէպ): Զարուհի Յ. Պանրի (նուիրատու): Փարիզ, 1946:
ՓԱՌԱՆԶԵՄ (Վէպ): Զարուհի Յ. Պանրի (նուիրատու): Փարիզ, 1946:

(Շարունակելի)